891.9994
L-38
10387

№ 109

ПЕРЕПЛЕТНЯ
Р. ЭДЕЛЬСОНА

891.542-94
Լ-38

9(49)
Լ-94 Վ-Մ

Լ. Է. Օ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

1001
1864

Հրատարակութիւն Սմբ. Դաղեանի

ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան։

1888

35595

Дозволено цензурою. 27 февраля 1888 г.
Г. Тифлисъ

(Հանած „Ա ղ բ ի ւ ր“ ամսագրից)

Типог. Шушин. Армян. Духовн. Вѣдомства.

003

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

Ա.

ՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Ուշիշ երեսուն տարի էր անցել Վարդանանց պատերազմից։

Աւարայրի ահեղ դաշտը իր օրհասական պատերազմով դեռ չէր մոռացել Հայաստանցին։ Վարդանի և նրա նիզակակիցների անունները լսվում էին և՝ զեղջուկ լեռնեցու կրակարանի մոտ, և՝ սակաւապէտ գինուորի կոշտ բնակարա-

նում, և՝ ազնուականի շքեղ դարպասում։ Դեռ չէր դադարել սիրելիների մըրմունջը, որով հետև նրանց սրտում լայն բացուած վէրքը դեռ չէր կեղև կապել դեռ Պարսկաստանում չէր մարել բանաերի խորքում շղթայակապ ընկածների հեծեծանքը։ Բայց Հայաստանը մի նոր փորձի վրայ էր։ Առ ժամանակ հանդարտած մթնոլորտը պատրաստվում էր կըրկին ահեղագոչ փոթորիկներ կրկնել։

Դիշեր է։ Կաթողիկոսանիստ Դուինը ընկղմուած է խորին լռութեան մէջ։ Ճրագները ամէն տեղ մարած են, ամայի փողոցներում ապաս տիրութիւն են տնում թափառաշրջիկ շները, որոնք այստեղ այնտեղ հոտոտելով քաղաքացիների երեկոյեան ընթրիքի մնացորդներն են որոնում պատերի տակ և աղբանոցներում։

Քնած է Դուինը։ Լուսին չը կայ. փայ-

լուն սատղերը համեստ շողշողում են մութ երկնակամարի վրայ։ Աշունը նոր է սկսուել։ Տաք օդի մէջ, դաւթում, խորդում է Աղրվէնատպ մարդպանի դրան պահապան պարսիկը։ Նրա տէրը այժմ շատ հեռու է գանվում. նա անհոգ ընկած է, նիզակը դէմ է դրել պատին, կարճիկ երկսայրին գօտիից կախ ընկած է մնացել։ Նա կարծես քաղցր երազի մէջ է. տեսնում է Պարսկաստանի պարզ երկինքը և այդ երկնքի տակ՝ իր անշուք բնակարանը, ուր այդ լոպէին միմեանց գրկած քնած են նրա փոքրիկ զաւակները. երրորդ տարին է որ դրանից չի տեսել հէգ դէնուերը։ Քնած է և զաւակների մայրը, խրոխտ պարսկուհին. քնած է իր ամուսնու հետ դէմ երազում խօսելու քաղցր յոյսով։ Պահապանը ժպտում է, երջանիկ է իր այդ վաղանցուկ երազով, որ մոռացնել է տուել ամեն ինչ։ Եւ ոչ

ոք չի խանդարում այդ երազը։ Միայն աշնանային մեղմ քամին, որ երբեմն դուրս է թռչում տան պատի քամակից, քսվում է նրա դէմքին և խկոյն էլի հեզիկ լռիկ սահում, անցնում։

Գիշերային այդ պահուն քնած չէ միայն մի կին, որ միայնակ փակուած է Դուբնի կենդրոնական թաղում շինած մի տան մէջ։ Ճրագի ադօտ լոյսը պատուհանի լայնութեամբ մի փայլուն շերտ է գցել բակի վրայ։ Շրջակաները լուռ են, անշարժ։ Լուռ է և ինքը, բարձրահասակ, սևապանդուր կինը, որ ահա չորս ժամ շարունակ նստած է մի փոքրիկ անկողնի մօտ և ամենայն ուշադրութեամբ նայում է այնտեղ պառկած մանուկի դէմքին։ Ցաւահատութիւնը հեռագիտէ սատկանում է այդ կնոջ դէմքի վրայ. երբեմն նրա կրծքից դուրս է թռչում մի հանդարտ հառաչանք։ Եւ յաճախ

ձեռքը դնելով երեխայի ճակատին և շրջ-
թունքներին, էլի նայում է նրան. նա-
յում է, չի կշտանում։

Երեխան հիւանդ է։ Նրա փափուկ
դէմքի վրայ նկատելի է օրհասի նշանը,
որ կապոյտ գոյնն է համարվում։ Շնչա-
ռութիւնը կցկտուր է, շատ դանդաղ. եր-
բեմն կրծքի միջից լսվում է մի սարսա-
փելի խզզոց։ Քնած է երեխան թէ հո-
գեվարքի մէջ է։ Այդ չը գիտէ մայրը և չի
էլ ուզում իմանալ. նա նրան քնածի
տեղ է դրել և այդ իսկ պատճառով չի
համարձակվում ծածկել երեխայի փոք-
րիկ փափուկ թևը վերմակի տակ, վա-
խենում է դրանով վրդովել սիրելի զա-
ւակի քունը։

Գիշերը ծանր անցնում է. ճրագը իր
բոսորագոյն լուսով օդնում է մորը աներ-
կիւղ մնալ և անթարթ աչքերով դիտել
երեխայի դէմքը։ Ճրագը նոյնպէս օդնում

է մօր աւելի և աւելի յուսահատուելուն։ Մաքերը հեռացել են նրանից. մինչև անգամ աղախիններից մէկին չի կանչում, որ սփոփի իր սիրտը, որը աւելի և աւելի սեղմվում է, զգալով օրհասի ներկայութիւնը։

Ասում են, մարդուս սիրտը երբեմն և շատ հեռու տեղերում զգում է այն, ինչ որ պիտի պատահի այն մարդկանց, որոնց մասին նա մտածում է։ Այդ բոլորովին ճիշտ էր Հրահատ Կամսարականի վերաբերմամբ։ Նոյն այդ գիշերը, նոյն այդ պահուն, երբ նրա կինը այսպէս տանջվում էր, իշխանը իր եղբօրց հետ դաշնվում էր Հայոց բանակում, որ հեռաւոր Աղուանից երկրից յետ էր դառնում Դուին, և Ճանապարհին վրաններ էր գարկել Շիրակայ դաշտում, հանդիստ առնելու համար։ Կամսարականները մենակ չէին։ Մի լայնարձակ վրանում հաւաքուած

էին բանակի բոլոր նշանաւոր իշխանները։ Կաղմուել էր մի գաղտնի խորհուրդ. իւրաքանչիւրն իր կարծիքն էր յայտնում։ Միայն Հրահատ իշխանն էր, որ շատ տխուր էր։ Նա քաշուել էր մի անկիւն և ինքն էլ չը գիտէր թէ ինչեր էր լսում։ Նրա սիրտը մի թշուառութիւն էր ըզգում։

Այդ տխրութիւնը նկատելով Սիւնեաց կրտսեր իշխան Բարգէնը, որ Հրահատ իշխանի սրտակիցն էր, զարմացած մոտեցաւ և ձեռքը դնելով նրա ուսին, տկանջում փսփսաց մի քանի քաղցր, բայց յանդիմանական խօսքեր։ Կամաւորականը ընկերի այդ խօսքերի վրայ կարծես արթնանալով, վեր կացաւ, առաջ նստեց։ Այժմ նա ուշադիր էր վիճաբանութիւններին, թէև նրա դէմքը դեռ պատած էր հոգեկան անձկութեան ապաժոյժ սառնորով։

Խօսում էր մի գանգրահեր, երկարահասակ և լայնաքանչ տղամարդ.

—Աստի որ վտանգաւոր է այդ ձեռնարկութիւնը: Պատրաստի այժ չը կայ, իսկ մեր նախարարները դեռ շարունակում են իրանց երկրիմի գործողութիւնները. մի օր պարսից հլու ծառայ են երևում, միւս օրը իրանց շահերն ջերմ պաշտպան, անձնիշխան պետեր: Աւելի լաւ է, իմ կարծիքով, մեր բոլոր յոյսը Աստուծու վրայ դնել. նա միայն կարող է մեզ հովանաւորել: Ես չեմ ասում թէ մեր լոյս հաւատը վտանգի մէջ է, բայց իմացէք որ մեր թշնամին էլ պակաս զօրեղ չէ: Դուք կարծում էք թէ մեզ կօգնեն վրացիները կամ հոները. ոչ գիտէ՞ կօգնեն ապրելոք: Տկարամիտ մարդկանց վրայ յոյս դնելուց լաւը նա կը լինէր, որ ապաւէնք Աստուծուն մեզ օգնութեան հասնել և չը մոռանայ մեր սուրբ նախնիք-

ներին, որոնք արիւն թափեցին մեզ համար։

Այդ խօսքերի վրայ խորհրդականների մէջ մի շշունջ անցաւ. մի քանիսները ծիծաղեցին, որոնց թւում է Սիւնեաց իշխան Գրիգորը, մի հսկայատիպ մարդ, որ բոլորի մէջ վեհագոյն էր իր խրոխտապանծ դէմքով, իր հուժկու կազմուածքով և փառաւոր զգեստով։ Նստածները խոյն նկատեցին, որ իշխանի ծիծաղը միւսների ծիծաղի նման չէր. նրանք վազուց դիտէին, որ Գրիգորը իր ծրագիրն ունի և չի հետաքրքրվում այս ժողովով, այլ նման էր երկար նստելուց շատ ձանձրացած մի մարդու. կարծես նա ամէն րոպէ հարցնում էր թէ ի՞նչ է նշանակում այս ամէնը և ե՞րբ կը վերջանայ։

Ներսէհ Կամսարականը, Հրահատի մեծ եղբայրը, որ խորը մտածում էր իր լսած-

ների վրայ, սկսեց խօսել իր թանձր ու ախորժելի ձայնով։

—Լաւ ես ասում, Վահան իշխան, ասաց նա,—առանց Աստուծու ունայն է մարդկային յոյսը։ Եւ մենք Նրա օգնութեամբ միայն ուզում ենք գործ սկսել։ Ցիշեր, որ Պերոզը յաղթուած փախաւ Պարսկաստան։ վրացիները եւ հոները ատելութիւն են որոնում դէպի պարսիկները։ Այս բարեպատեհ առիթը եթէ ձեռքից թողնենք եւ ուրանանք մեր եկեղեցին լոկ աշխարհային փառքի համար, վատի անուն պիտի ժառանգենք յաւիտեան։ Ինքը Տէրը տեսնում է, որ մենք անձնական փառք չենք որոնում, այլ մեր հայրենի եկեղեցու պաշտպանութիւնն ենք ձեռք առնում։ Մենք չենք ծրագրում մի նոր բան, որին սովոր չը լինի հայը։ Արդէն քո հօրեղբօր օրինակը ամենքիս աչքի առաջ է։

—Հայրենիքը վտանգի մէջ է, շարունակեց Հրահատը իր եղբօր սկսածը։— Պարսկական խորամանկութիւնը ուզում է մեզ վերջին հարուածը հասցնել։ Աւարայրի փորձը մոխրապաշտներին խելքի չը բերեց, այլ ընդհակառակն այժմ այնպիսի մեքենաներ են սարքել մեր դէմ, որ մենք պիտի ծանր խորհենք մեր դիրքը, մեր անելիքը։ Ոչ վրացիներն են մեր յոյսը, ոչ հոները։ Ոչ։ Մենք յոյս ենք դրել մեր մահուան վրայ. այո՛, մեր արիւնով միայն վստահ ենք, որ այլ ևս չենք տեսնել մեր սուրբ եկեղեցին արհամարհուած։

Գանդրահեր ազամարդը, որ Մամիկոնեան Վահանն էր, մեծ Վարդանի եղբօր՝ Համայակի որդին, խորին մտածութեան մէջ ընկաւ Հրահատի վերջին խօսքերը լսելուց։ Մի ինչ որ բան նրան տանջում էր։ Թաւ յօնքերով պատած ահեղ աչքե-

ը յառեցան դեմնին, ճակատի վրայ կուտակեցան կնճիռները։ Նրա սիրտը աւելի ևս բորբոքեց Բաբդէն Սիւնին, որ խիստ կծու ձայնով խօսեց Հրահատից յետոյ։

—Անվճռականութիւնն անարի վախկոտութեան նշան է։ Այս ազատազունները ուխտում են մեռնել կրօնի համար և այդ ուխտը չընդունողը պարզ վկայում է, որ մարմնաւոր փառքի գերի է։ Այդ փառքը ատողներս մի կողմ կանգնենք և վճռենք մեր անելիքը։

Վահանը չը կարողացաւ լռել։

—Իշխան Բաբդէն, ասաց նա անվրդով, հանդարտ ձայնով, գովում եմ երիտասարդական եռանդդ, բայց այդպէս սուր կերպով վճիռ դնելը քիչ ընդդէմ է խորիմաստ կշռադատութեան կանոնին։ Արդէն ձեզ ամենիդ յայտնի է, թէ ինչպէս ես կուրացած աշխարհի փառքից,

մի քանի սինքրոն դրպարտիչների լեզուն կապելու համար ուրացայ իմ լոյս հաւատը և երկրպագութիւն արի արեգակին ու կրակին և դրա համար պարգևներ ստացայ Պերոզի արքունիքից։ Բայց շատ չը տևեց իմ մտաւոր կուրութիւնը. մեր նախնիքների պաշտած Աստուածը բաց արաւ միտքս, և ես մի կարճ միջոցում հասկացայ թէ ինչ քստմնելի գործ եմ արել մի անցաւոր սին փառասիրութեան համար։ Վկայ թող լինի իմ եղբայր Վասակը, որ այստեղ ձեզ մօտ է, թէ քանի քանի անգամ լուսեցայն արտասուք եմ չափել անիրաւութեանս համար։ Այժմ, այս եղբայրական միաբանութեան խօսքերը լսելով, սիրտս ուժգին ցաւում է։ Ես համաձայն եմ, որ պիտի մեռնինք մեր հաւատի համար, և ամենից առաջ ես պիտի մեռնիմ, որ արիւնովս ջնջեմ անուանս վրայ դրած

արատը։ Գնանք ուրեմն, գնանք մեռ-
նինք։

Ծողովը ուրախութեամբ ընդունեց Մա-
միկոնեանի այդ համաձայնութիւնը. իսկ
երբ Վասակ Մամիկոնեանը ոգևորուած
ցանկացաւ միանալ նրանց հետ, կրտսեր
Կամսարականը չը կարողացաւ արտասուն-
քը պահել։ Իսկոյն Վահանին ընտրեցին
սպարապետ բոլոր զօրքերի վրայ, որով-
հետև բոլորն էլ ակամտաես եղած էին
նրա քաջագործութիւններին, բոլորն էլ
նրան դեռ պատանեկութիւնից ճանա-
չում էին իբրև ամենախ որսորդ և հիա-
նալի գինաշարժ։

Հայոց զօրքերին ուղեկցում էր Բզնե-
ցի Աթիկ քահանան, Ղևոնդեանց արժա-
նի յաջորդը. նա իսկոյն հանեց Աւետա-
բանը, որի վրայ բոլոր ներկայ եղողները
միաբանութեան ուխտ կապեցին և երդ-
մամբ հաստատեցին այդ ուխտը։

Ցետոյ իշխանները եղբայրաբար համբուրվեցան միմեանց հետ և ժողովը ցրիւ եկաւ։

Գիշերուայ կէսն էր, երբ ամեն մէկը իր վրանն էր որոնում։ Բայց երկու մարդիկ հեռացան Հայոց բանակից և շտապով դիմեցին դէպի մի քանի վրաններ, որոնք նշմարելի էին դաշտի տարածութեան վրայ, քիչ հեռու։ Այնտեղ էր Ատրվշնասպ մարզպանը, որ հայ զօրքի հետ Հայաստան էր վերադառնում։ Գնացողներն էին վեհապանծ Գդիհոն Սիւնին և Վարազշապուհ Ամատունին, երկու իշխաններ, որոնց սիրտը լցուած էր կոյր ատելութեամբ և նախանձով։ Նրանք այլ ևս չը վերադարձան Հայոց բանակը։

Բ

ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԻ ՊԱՐՏՔ

Հայոց բանակը միւս օրը սաստիկ ճեպով խաղում էր դէպի Արտաշատ։ Զինուորների դէմքերը ուրախ էին, խօսակցութիւնները զուարթ։ Բանակի առաջ ձիարշաւում էին իշխանները, որոնք շուտ-շուտ յետ էին նայում և շտապեցնում էին զօրքը։ Քայլերը հետզհետէ աւելի և աւելի արագանում էին. բոլորը ջանք էին գործում օրքան կարելի է շատ ճանապարհ կտրել։ Ինչ կար։

Աղրվիանապը երկու յուզանների ընթացքով հայ նախարարների խորհուրդը, երդումը, և վախենալով թէ մի գուցէ լու-

ԵՐԻՎԱՆ ԱՐՎԵՍՏ

սարային իր վրանը Հայոց սուսերամերկ զինուորներով շրջապատած տեսնէ, կրակել էր դիշերուայ քունը և մթնով փախել էր ուրացեալ հայ նախարարներով շրջապատուած։ Ահա նրանց էր հետամուտ լինում հայ հեծելազօրքը։ Տարածութիւնը, որ բաժանում էր փախստականներին հետապնդողներից, աւելի և աւելի կարճանում էր։ Փախչողներն ապաւինել էին ծուռ ու մուռ ճանապարհներին, բայց շուտով տեսան որ այդ յոյսն էլ խաբուսիկ է։ Հրահատ Կամսարականը ձիու ականջը մտած իր քաջ մարդկանց հետ թռչում էր զառիվայրերով և խորխոր ձորերի մօտերքով։ Այդ ժամանակ փախչողներից մէկի ձին սկսեց յետ մնալ։ տանջուած կենդանին յոգնած էր և ուշաղրութիւն չէր դարձնում իր տիրոջ անխնայ հարուածներին։ Կամսարականը հեռուից ճանաչեց նրան և սաստիկ խր-

թելով իր ձիու կողերը, հարկադրեց նը-
րան աւելի ևս արագ սլանալ։ Կարճ մի-
ջոցում նա բռնած ունէր յետամնացին։

—Դաւաճան, գոչեց նա ահեղ ձայնով,
—ահա գտար փառքիդ պսակը։

Կալանաւորը Գրիգոր Խոսրովունին էր,
որ ուրացեալներից մէկն էր և շատ չա-
րիք էր հասցրել հայերին իր բանսար-
կութիւններով։ Մի ակնթարթում նրան
շրջապատեցին հայ զինուորները։

Առջևից փախչողները տեսնելով, որ
այլ ևս հալածողներ չը կան, իջան ձիանե-
րից, որ խեղճ կենդանիներին այժ տան
գժուար ճանապարհը շարունակելու։ Սա-
կայն Բարգէն Սիւնին թողնելով Հրահա-
տին իր գերու հետ հաշիւ տեսնելը շա-
րունակեց հետախուզութիւնը և վրայ
հասնելով, սարսափելի իրարանցում զը-
ցեց փախստականների խմբի մէջ։ Այդտեղ
էլ մի քանի մարդիկ բռնուեցան։ Իսկ

Ագրվհնասպը կարողացաւ շատերի հետ փակուել Արտաշատի բերդում։

Հայ բանակը չուեց դէպի Դուին։

Քաղաքը զարմացած մնաց, տեսնելով գերի իշխաններին, որոնցից մինչև այդ օրը դողում էր իւրաքանչիւր հայ։ Մինչդեռ Վահանի մարդիկը բացատրում էին եղելութիւնը, Հրահատը աշտանակից ձին դէպի այն տունը, ուր Թողել էր իր կընոջը Ագուանից կողմերը գնալուց առաջ։ Նա դուռ այդ տունը սուրի տխրութեամբ պատած։ Արի տղամարդը համարեա հասկացաւ, թէ ինչ էր պատահել և ձիու սանձը զցելով ծառային, սենեակն ընկաւ։ Այդտեղ տեսաւ Զարուհի տիկնոջը մի փոքրիկ դագաղի առաջ, հերարձակ սեւերով պատած։ Տիկինը սկսեց բարձրաձայն ողբալ իր Խորէնին, իր այն փոքրիկ հրեշտակին, որին տեսանք հիւանդ ընկած անկողնում։ Հայրն ընկաւ

դագաղի վրայ, երեսը դրաւ երեխայի սառնըն դէմքի վրայ և այդպէս խլացրեց իր հեկեկանքը։ Շատ կարճ միջոցում հաւաքուեցան ազգական ու բարեկամ։ Ամենքի լաց ու կոծը անմխիթար էր։

—Ա՜հ, որդիս, հրեշտակս... ա՜հ, Խորէնս, դու էիր ինձ թէ տալիս օտար երկրում. քո տատն էր ինձ առաջնորդում, քեզ համար էի պահում կեանքս՝ այլ ևս ի՞նչ կեանք մնաց... գնամ, ես էլ մեռնեմ։

Այսպէս էր ասում Հրահատը և թեւերը տարածած Խորէնի դիակի վրայ, համբուրում էր նրա դէմքը։ Բարեկամները և նոյն իսկ Կամենարական տիկինը մի կերպ կարողացան յետ տանել սրտամորմոք հօրը։ Բայց նա էլի լաց էր լինում. ցաւը այնքան սաստիկ էր, որ նա մոռացել էր ամենքին, մինչև անգամ իր սիրելի տատուն։ Թէև երկար ժամանակ օտարութիւն էր քաշել, բայց ոչ ոքին մի սա-

ոչն բարև անգամ չասեց։

Երկու ժամ դեռ չէր անցել Հրահատի գալուց, մի ձիաւոր զինուոր կանգնեց տան դռան մօտ և ասաց որ կամենում է իշխանին տեսնել։ Սա իսկոյն դուրս գնաց։

—Ի՞նչ կայ, Մուշեղ, հարցրեց նա ծանոնը, վշտահար ձայնով։

—Սպարապետն ուղարկեց ձեզ յայտնելու, որ իսկոյն արշաւում ենք Արտաշատի վրայ։ Դուք պիտի վարէք յառաջապահ խումբը։

—Բայց քանի՞ են տանս մէջ եղած սուղը շարունակեց իր հարցմունքը իշխանը։

—Բարթուղիմէոս հայր սուրբը պատմեց ամենքին։ Սպարապետը շատ տխրեց, ափսոսաց որ ժամանակ չունի անձամբ գալ մխիթարել Կամսարական տիկնոջը, այլ հրամայեց ինձ շտապել յայտնել ձեզ այն,

ինչ որ արդէն ասացի։

—Թող սպասենք։ Իսկոյն կը գամ, պատասխանեց Իշխանը և յետ դարձաւ Հրամայեց Ծառային մի ուրիշ ձի պատրաստել իր համար։ Ապա մտաւ սենեակը, ուր լայկանները կրկին սուգ էին սկսել։ Իշխանի հրամանով լացը դադարեց, նա դարձաւ դէպի իր կինը արտասուալից աչքերով։

—Թաղի՛ր Խորէնին, Զարուհի, իսկ ես գնում եմ, ընկերներս ինձ են սպասում։

—Մի թէ գնում ես, ճչաց տիկինը— այդ է քո սէրը մեր անբախտ զաւակի վրայ։

—Դու դեռ չը գիտես թէ ինչ կայ, պատասխանեց Հրահատը, աշխատելով խօսել մի հանդարտ ու համոզիչ ձայնով, որ սիրտ տար իրան էլ, կնոջն էլ,—եթէ չը լինէր մեր զաւակի այս սուգը, անշուշտ կիմանայիր թէ Շիրակայ

տէրերը ինչ են մտել և զուցէ այն ժամանակ իբրև մի հարազատ զաւակ հայրենի եկեղեցու, դու ինքդ կը պահէիր ձիուս սանձը և կը պատուիրէիր քաջ լինել, պատերազմել իբրև հասարակ զինուոր։

—Բայց ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրեց տիկինը անսովոր հետաքրքրութեամբ։ Երևում էր, որ Զարուհին զուրկ չէր իր ամուսնու պատերազմական ոգևորութիւնից։

—Հեռու կը տանէր ինձ մի առ մի պատմելը. սպարապետը երկար սպասել չէ կարող... գնամ...

—Ո՞վ է սպարապետը, դարձեալ հարցրեց տիկինը, չը բաւականանալով Հրահատի կտրուկ պատասխանով։

Բայց նա չը լսեց այդ հարցի պատասխանը։ Իշխանը կրկին ընկաւ դագաղի վրայ, համբոյրներ թափեց անշունչ ու

անդրդայ դեմքի վրայ։

— Թաղեր Խրիստոնին, Զարուհի. վերջին անգամ իմ փոխարէն մի աւելորդ համբոյր ևս տուր նրան, ասաց դժբախտ հայրը և աչքերը սրբելով այնպէս շտապով դուրս գնաց, որ ասն մէջ հաւաքուածներից ոչ ոք ոչինչ չէր հասկացաւ։

Բանակը չուել էր։ Իշխանը քշեց իր ենիչարները որը շուտով ընչ ասպառ հասցրեց նրան զինուորների երկայն շարքին։ Միւս իշխաններքը շտապեցին մինչեւ թարեկ որդեկորոյս հօրը, իսկ Ներսէհ և Արշաւիր Կամսարականները լաց եղան իրանց եղբօր դժբախտութեան վրայ։ Ազգ Հրահատը անցաւ յատուկապահ զինուորների գլուխը։

Զօրքը պաշարեց Արտաշատը, բայց ի դուր։ Աղրվիշնասան իր արբանեակների հետ փախաւ դէպի Ատրպատական։

Մի քանի օրում Հայաստանի մէջ հա-

մարեա ամենքն իմացան Վահանի այդ գործերը։ Շատերն ուրախացան, իսկ փառամոլ նախարարները ծաղրում էին այդ ձեռնարկութիւնը։ „Ուրացող տաբծնեցին չափազանց յանդուգն է, ուզում է հրաշք գործել, ասում էին նախարարները իրանց ժողովրդին.—բայց այդ յանդգնութեան վերջը ծաղրելի կը լինի. պարսիկների համար ոչինչ բան է կամել նրան իր չորս հարիւր ապստամբների հետ“։

Սակայն Վահան Մամիկոնեանը կամով ելաց չէր վախում։ Իր բոլոր յոյսը դնելով Աստուծու վրայ, նա գնաց Յովհան Մանդակունու մոտ, որ այդ ժամանակուայ կաթողիկոսն էր։ Արիզարդ հայրապետը, Սահակի և Մեսրոպի յաջորդէմ աշակերտը, ուրախութիւնից զոզալով օրհնեց սպարապետին և նրա գործը, յորդորեց կիսատ չը թողնել սկսած գործը։ Ժողովրդի հաճութեամբ մարզպան

կարդուեցաւ Սահակ Բագրատունին, որի խնդրանքը Մովսէս Խորենացին գրել էր Հայոց ազգի պատմութիւնը։ Բոլոր միաբան հայերը երդուեցան, որ ամէն կերպով պիտի հնազանդին իրանց մարզպանի և սպարապետի հրամաններին։

Վահանը մի րոպէ չը մոռացաւ իր պաշտօնը։

Գ

ՀՐԱՒԷՐ ԵՒ ՄԵՐԺՈՒՄՆ

Աղրվենասպին միշտ վրդովում էին հայերից հալածուելը և Գուլինում թողած իր ծառաների կարանաւորելը. դայրոյթը դողացնում էր նրան դիշեր ու ցերեկ։ Վառուած կրակի վրայ իւղ էին ածում ուրացեալ նախարարները, որոնք հաւատացնում էին պարսիկ զօրավարին, թէ Վահանին տապարելը շատ հեշտ է, որովհետև նա աննշան զօրք ունի և թէ հայերի յոյսը վրացիների վրայ է, որոնք չէին կարող իսկոյն օգնութեան հասնել Աղրվենասպ սիրտ առաւ, այդ ուրացեալների հետ մի արշաւանք պործեց դէպի Հայաստան։

Հայոց կաթողիկոսը կրկին էլի ժողովից ուխտապահ իշխաններին և ազգուքարոզով յորդորից քաջ լինել և թշնամու մեծ բազմութիւնից չը վախենալ։ „Դուք կռվում էք եկեղեցու փառքի համար, ասաց յուզուած Մանդակունին,— դուք սուր էք հանում անիրաւութեան, բռնութեան դէմ. ապա ուրեմն դուք Քրիստոսի զինուորներն էք։ Մենակ էք, այո, գիտեմ, սակաւաթիւ՝ հպարտ թշնամու առաջ. բայց դրանով չը լինի թէ վհատուիք։ Դուք ունիք մի մեծ դաշնակից, որ երբէք չի թողնիլ ձեզ։ Դա եկեղեցին է, որ իր բոլոր մանուկների բերանով յաղթութիւն կը խնդրէ յաղթողների Յաղթողից“։

Որոշուեցաւ, որ Սահակ մարգպանը և Վահան սպարապետը մնան Դուին, իսկ միւսները զօրքերը առնեն պարսից դէմ։ Բարգէնը անուանուեցաւ Սիւնեաց տէր՝

ուրացեալ Գրիգոնի տեղ, մի և նոյն ժամանակ զօրավար։ Նրան ընկերակցում էին սպարապետի եղբայրը Վասակ, Ներսէհ և Հրահատ Կամսարականները։

Աղրվէնասպը և ուրացեալները կրկին ամօթերես մնացին։ Մասեացոցն գաւառի Ակուռի գիւղի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը։ Հայերի կողմից պատերազմի ժամանակ թշնամու կողմն անցաւ Գարջոյլ Մաղխազունին հարիւրմարդկանց հետ։ բայց մնացեալ երեք հարիւր հայերը դարձեալ յաղթող հանդիսացան։ Աղրվէնասպ զլոսկոր փախուստ տուաւ դէպի Պարսկաստան, տանելով իր հետ ուրացեալներին։

Դուինի կաթողիկոսը եկեղեցական երգեցողութիւններով ուշեց այս զարմանալի յաղթութիւնը։ Վահան և Սահակ ուրախ էին։ Նա որովհետև ձմեռը վրայ էր հասնում, սկսեցին զարնան պատե-

բազմի պատրաստուիլը։ Նախ և առաջ մարդ ուղարկեցին Վրաց Վախթանգ թագաւորի մօտ և նրա խոստացած օգնութիւնը խնդրեցին։ Վախթանգը խաբէութիւններով մի քանի ժամանակ հայերին պահելուց յետոյ, երեք հարիւր սրիկայ հոներ ուղարկեց Հայաստան, որոնք սակայն շուտով էլի յետ դառան նրա հրամանով։

Դրսից օգնութիւն չը կար։ Վահան սպարապետը տխրութեամբ տեսնում էր որ ի վերջոյ ինքը մենակ պիտի մնար. արդէն առաջին խորհրդից յետոյ քանիսնե՞ը դաւաճանել էին ուխտին։ Գործը քայքայվում էր դեռ չը սկսուած։ Կարելի էր չը հաւատալ և ամենահարազատ զօրականին. զարմանալի չէր լինիր, եթէ յանկարծ դաւաճանէր և այնպիսին, որի վրայ ամենից շատ հաւատ ունէր Վահանը։ „Ահա ինչպէս ապականել է պարս-

կական ոգին մերոնց սիրտը՝, մտածում էր Վահանը երկար ժամանակ, իսկ մի քանի հարցեր շատ անհանգստացնում էին նրան։ Ինչով էր հրապուրելի Վահանի կողմը. նա ոչ պարզև ունէր տալու, ոչ պատերազմական ճոխ աւարի խոստումն։ Այն ինչ արեաց Պերոզ արքայն կարող էր ամէնքին խելքից հանել հարուստ ընձաներով։ Մի՞թէ ինքը Վահանը մի ժամանակ չէ՞ր շլացել այդ պարգևների փայլով։ Որքան շատ էր մտածում նա այդ տխուր հանգամանքների վրայ, այնքան աւելի շատ էր համոզվում որ պէտք է զգուշութեամբ գործել։

Ցանկարծ նա յիշեց մի միջոց, որ վերջինն էր։ Պէտք էր և այդ միջոցը փորձել։ Ուստի մի ձմեռնային ցուրտ երեկոյ գնաց կաթողիկոսի մօտ, յայտնեց նրան երկրի և իրերի դրութիւնը և դառ-

նապէս զանդատուեց Հայերի անմիաբանութեան վրայ։

Վահրամ Ծերունին առանձնացած շարադրում էր իր գեղեցիկ երգերը։ Սպարապետի խօսքերը տխրացրին նրան։ Այո, իրողութիւնը այդպէս էր, նա համաձայն էր։ Բայց և այժմ չը կորցնելով իր հոգեկան կորովը, նա Հայրաբար խրատեց սպարապետին որի և եռանդոտ մնար, իմանալով որ իր կողմն է Աստուած, որի համար հնարաւոր է և երեք հարիւրով մի քանի հազարներից բաղկացած բանակը ցիր ու ցան անել, ինչպէս այդ եղաւ Ակուռիի մօտ։ Ի վերջոյ Հայրապետը խորհուրդ տուաւ Վահանին դառնալ նախարարական գօրեղ ցեղերին, որպիսիքն էին Արծրունիք, Անձևացիք, Ռշտունիք և Մոգացիք։ Մամիկոնեանի միտքն էլ հէնց այդ էր։ Բայց որով հետև այդ նախարարներից շատերը այնքան դո-

ռող էին, որ արհամարհում էին նորընտիր սպարապետին լոկ այն պատճառով, որ նա դեռ ջահիլ էր և ծագումով ոչ այնքան նշանաւոր, ուստի կաթողիկոսը համաձայնուեցաւ Սահակ Բագրատունու հետ կատարել այդ միտքը։ Իսկոյն ներս հրաւիրուեցաւ վեհարանի աւագ եպիսկոպոս Թաթուլը և կաթողիկոսի հրամանով սկսեց հրաւիրագրեր պատրաստել Հայոց աշխարհի զանազան կողմերի պետերին։

Թղթերը կրում էին կաթողիկոսի և մարզպանի ստորագրութիւնները և այսպիսի բովանդակութիւն ունէին.

«Գործը, որի մասին դուք հրաւիրվում էք, ոչ սնապարծութեան անունով է սկսուած, ոչ էլ մի բռնակալական և աշխարհակալական նպատակ ունի։ Ձեզանից շատերը Պարսից արքունիքի վախից ակամայ ընդունել են մոխրապաշտու-

թիւնը և այդպիսով քայքայելով մեր երկրի ոյժերը, ազատ կարողութիւն են տուել պարսիկներին բռնանալ մեր եկեղեցու վրայ, որի պաշտպանութեան համար, լաւ յիշեցէք, մի երեսուն տարի սրանից առաջ մեր հայրերը և եղբայրները սարսափելի մարտ մղելով, սուր ի ձեռին նահատակուեցան Ճշմարիտ Հաւատով։

«Պարսկական բռնութիւնը վերջին ճիգն է թափում մոգութիւնը Հայաստանում հաստատելու համար։ Եւ արդէն, ինչպէս լսել էք, նախարարներից մի քանիսը միացել են այդ ծանր բռնակալութեան դէմ։ Աստուած, որ Գեդէոնի ձեռքով պատուհասեց ամբարիշտ հեթանոսներին, որ իր սիրած Իսրայէլին չը թողեց եգիպտական անարդ ծառայութեան մէջ և որ ջրերի տակ խեղդեց ամբարտաւան Փարաւոնին, որ յանդգնել էր ծաղրել Նրա զօրութիւնը, նոյն Աստուածը

այսօր էլ կենդանի է և մեզ հովանաւոր։ Այդ պարզ ցոյց տուեց նրանով, որ աշխարհի առաջ իր սակաւաթիւ ծառաներին շնորհեց մի այնպիսի յաղթութիւն, որի վրայ զարմացած մնաց նոյն ինքն խաչի թշնամին։ Ապա ուրեմն շտապեցէք մասնակից դառնալ այս սուրբ գործին, ընդունել Քրիստոսի անանց փառքի պսակը։

«Արդարև դուք լաւ գիտէք մեր սուրբ օրէնքը և ձեզ ուսուցանելու միաք չունինք մենք։ Ուրեմն էլ ինչի՞ ենք սպասում։ եկէ՛ք ժողովուենք եկեղեցու թշնամու դէմ, յաղթենք, եթէ մեզ վիճակուած է յաղթել և ապրելով տեսնենք թշնամու կորուստը։ իսկ եթէ մահը անխուսափելի է, մեռնենք ապագայ կեանքում հրճուելու համար։

«Գործի մանրամասնութիւնները կը պատմէ ձեզ կաթողիկոսական նուիրակ

Գարեգին եպիսկոպոս, որ այս թուղթը հանդերձ հայրապետական օրհնութեամբ պաշտօն ունի յանձնել ձեզ։

Գարունը էր նոր բացուել, երկիրը հեղ-հեղ դէն էր գցում իր սպիտակ վերարկուն։ Տաք հովը երկրագործ հային դաշտն էր կանչում, իսկ խաշնարածին ցոյց էր տալիս մարդերի և դեւտմնեերի նորաբողբոջ զարարնելիքը։ Այդ ժամանակները միայն Գարեգին եպիսկոպոսը իր յանձնարարականը վերջացրած, սրբում ախուր Դուին էր դիմում։ Նա շտապում էր պատմել զառամեալ հայրապետին թէ ինչ սառն ընդունելութիւն գտաւ առաջնակարգ նախարարների կողմից։

„Ո՛չ իզուր յոյս է. ոչինչ չի կարելի անել։ Մեր առաջնորդող մարդկանց գողութիւնն ու անմիաբանութիւնը վերջին պատիժը պիտի հասցնէ մեր խեղճ

հայրենիքին", ասում էր Վահանը ինքն իրան, եպիսկոպոսի վերադարձից յետոյ։

Եւ նրա զայրոյթը այնքան էր, որ նա ուզում էր լաց լինել։

—

Զատկից մի շաբաթ էր անցել։ Մի մարդ իր ձիու կողերը անդադար փշրելով արդէն հաս ու հաս էր Դուինի դրոներին։ Երեւում էր որ նա սուրհանդակ էր և շտապում էր ժամանակից մի ժամ առաջ տեղ հասցնել իր հետ բերած կարեւոր լուրը։ Տեսնելով սակայն, որ ուժասպառ կենդանին այլ ևս շարժուելու կարողութիւն չունի, նա թռաւ ինքաւ գետին, սանձը զցեց ձիու գլխով, մի քանի խօսք ասաց իր մօտով անցնող մի հային և ինքը ամնապարանօք դիմեց դէպի քաղաք։ Շուտով նա հասաւ կաթողիկոսարանը։

Դա մի անձևացի զինուոր էր, որ պատմեց թէ ինչպէս իր տէրը, Յովհան Անձևացին և Ներսէհ Երուանդունին իրանց մարդկերանցով գալիս էին Վահանի խմբի հետ խառնուելու, բայց Առեստ գիւղաքաղաքի մօտ նրանց ընդ առաջ ելան Անձևացեաց տէրը Սևուկ և Մոկաց իշխան Յովհանը, որոնք զայրացել էին, թէ ինչու նրանք գնում էին սպարապետի օգնութեան, երբ իրանք բացէ ի բաց մերժել էին կաթողիկոսի հրաւէրը։ „Առեստի մօտ ճակատ ճակատի կանգնեցին երկու հայ զօրքերը, պատմեց սուրհանդակը. մեր կողմից շատերը մարտի անպատրաստ էին, բայց և այնպէս Աստուծոյ անունը տալով սաստկաբար յարձակուեցանք, ջարդեցինք, ընդդիմադրեցինք։ Երուանդունին և իմ տէրը կռվում էին Յովհան Մոկացու հետ։ Մենք անհամբեր սպասում էինք թէ ինչ

վերջ կունենայ դրանց կռիւը։ Մոկացուն մենք շատ էինք ատում, որովհետև նա ծաղրել էր մեր տիրոջը, ասելով թէ Յովհան Անձևացին ոչ մի բանի պէտքական չէ, պէտք է նրա վիզը մի օղակ գցել և կով ի պէս կապել։ Նրանց կռիւը երկար չը տևեց. իմ տէրը և Նէրսէհ իշխանը շրջապատեցին նրան ետևից և առջևից և ես ինքս տեսայ թէ ինչպէս մեր իշխանը սրի ոյժգին հարուածով երկիր կոծանեց նրան։ Զօրքը փախստական դարձաւ և մենք հետապնդեցինք ու շատերին կոտորեցինք։ Իշխանը հրամայեց ինձ փութալ պատմել սպարապետին այդ ամենը, յայտնել որ իրանք երկու օրից այստեղ կը լինին և որ զգուշութեան միջոցներ ձեռք առնեն Հայոց զօրքերը։ Ցաղթուած նախարարները հրզօրներից են և երևի վրէժխնդրութիւնը շուտով զենք բարձրացնել կը հարկա-

դրէ յաղթուածի և սպանուածի ազգականներին։ Բացի այդ՝ ամենից լաւ կը լինէր, եթէ սպարապետը մեզ օգնելու համար պատրաստի այրուձի ունենար. մեր դնդերը այնքան սակաւաթիւ են, որ կարող են ամեն ժամանակ վտանգի ենթարկուիլ։

Սուրհանդակի հաղորդած լուրը շուտով իմացաւ բոլոր քաղաքը. մեծամասնութիւնը ուրախանում էր, որ Աստուծու օգնութիւնը ուխտապահների կողմն էր։ Իսկ կաթողիկոսը աւելի ևս վշտացաւ այդ լուրը առնելուց յետոյ։ Երիտասարդ հարազատ ազգակիցներ արիւն են թափում և ինչի՞ համար։ Այդպիսով կարող էր նեռքին ընտանի խռովութիւն ծագել, որ աւելի ևս այժ կը տար սրտաբին թշնամուն։ Ծանր էր այդ, շատ ծանրը։ Հայրապետը երկար մտածում էր զառնացած սրտով։ Ի՞նչ պիտի անէր

Վահանը մի սակաւաթիւ խմբի հետ. և նոյն ժամանակ, երբ նրանից օգնութիւն են պահանջում, Պարսկաստանից վատ լուրեր էին հասնում։ Պերոզը կատաղած էր Վահանի վրայ և պատրաստվում էր պատժել նրան։ Շուտով ուրեմն պարսիկ զինուորները կողոպտեն Հայաստանը. ով կը դիմադրէ նրանց։

Եւ կաթողիկոսին շատ էր տանջում այդ հարցը։ Նա նայում էր իր շուրջը. ամեն տեղ անտարբերութիւն, սառնութիւն էր տեսնում, մինչև իսկ անհաշտ թշնամութիւն։

Բայց փառաւոր Ծերունին չը յուսահատուեց. նայեց իր վրայ, յիշեց իր սիրելի քաջերին։ Նա վճռեց գործել... Եւ իր սպասաւորին Վահանի եռեից ղրկեց։

Դ

ՍԱՀԱԿ ԵՒ ԱՏՐՆԵՐՍԷՀ

Ապրիլը վերջանում է։ Երեկոյեան առնուշաբոյր օդը մի կերպ թմրութիւն է ազդել երկու ձիաւոր ճանապարհորդներին, որոնք գնում են դէպի Արտազի Գոմաձոր գիւղը։ Նրանց յոգնած ձիաները ծոյլութեամբ են յառաջ գնում։ Ձիաւորները լուռ էին, ամեն մէկը իր մտքերի հետ առանձնացել էր։ Արեգակը մայր էր մտել, գիւղի հօտերը բառաչելով արօտներից դանդաղ յետ են դառնում դէպի ձորի աղբիւրը։ Նրանց առաջնորդում է փոքրիկ հովուի սրինգը, որի բարակ ու քաղցր ձայնը լսելով առ ժամանակ կանգ են առնում մեծ ճանապարհով գնացող

զիւղացիները։ Դրանցից մէկը, մի սպի-տակահեր ծերունի նստեց Ճանապարհի կողքին, որպէս զի չալ էշը կուշտ արածէ և հանգստանայ։ Գարնան խաղաղ օդը, սրինգը, անասուններին աղաղակը այնքան դուրեկան էին ծերունուն, որ նա պառկեց կողքի վրայ, ահագին ցուպը գլխատակին դնելով։

Նա կը քնէր, եթէ չը լսէր հեռուից ձիու ոտնաձայնը։ Երկիւղը հարկադրեց կանգնել տեղից. սակայն տեսնելով, որ էշը հանդարտ արածում է, հանգստացաւ և առաջ գնաց։ Նուտով հասան ձիաւորները, որոնք մեզ յայտնի երկու լուռ Ճանապարհորդներն էին։

—Այս մէկին Ճանաչում եմ, իսկ այն միւսը առաջին անգամն է պատահում, ասաց ծերունին և կանգնեց, բարի երեկոյ մաղթեց եկողներին։ Նրանք միաբերան պատասխանեցին, իսկ մէկը աւելաց-

ւեց թէ ինչպէս է ապրում Սահակ հայ-
րիկը։

—Բայց ո՞ւտեղից, Գրիգոր եղբայր, հարցրեց Ծերունին, և ո՞ւր բարի։

—Ներսէհապատից ենք գալիս, հայրիկ, պատասխանեց Գրիգորը.—իսկ այս գի-
շեր գիւղում պիտի մնանք. ընկերս ա-
ռաջ գնալ չի կարող։

Հայրիկը ուշադրութամբ նայեց ընկե-
րին և այժմ միայն իմացաւ որ դա մի գինուոր էր, որի աջ թևի վրայ վիրա-
կապ կար դրած։

—Սրևի ընկերդ կռուել է մէկի հետ, հարցրեց նա։

—Ոչ թէ մէկի, այլ շատ շատերի հետ։ Միթէ չե՞ս լսել, որ երէկ պատերազմ է եղել Ներսէհապատի մօտ։

Ծերունուն խիստ հետաքրքրեցին այդ խօսքերը։

—Ամբողջ երկու շաբաթ է սարերու-

մին ենք լինում, պատասխանեց նա.— ով էր պատերազմողը. անցեալներում լսում էինք թէ աւազակների խմբեր են շրջում Արտագի սահմաններում...

—Ո՛չ, ոչ, հայրիկ. պատերազմը պարսիկների հետ էր:

Ծերունին վեր քաշեց յոնքերը և զարմացած նայեց Գրիգորին. այդ լուրը, երևի, սարսափ դցեց նրա մէջ:

—Ձի՞ս լսել Վահան Մամիկոնեանի անունը, շարունակեց Գրիգորը.—նա է մեր այժմեան սպարապետը: Կռիւը շատ սաստիկ էր և Աստուծոյ ողորմութեամբ մեզ համար լաւ վերջացաւ:

—Վահա՞ն, Մամիկոնեան... Եւ Ծերունին սկսեց մոռածել:—Մեր սպարապետի ազգից: Հա՜, ճանաչեցի, Հմայակի միջնակ որդին: Ես նրան տեսել եմ երբ նա դեռ պատանի էր: Ես ինքս էլ Տարօնից եմ, և երեսուն տարեկան հասակում զինուոր

էի Վարդանի դնդում։ Այդ որսորդը մի թէ այժմ այդքան առաջ է գնացել։

—Այո՛, հայրիկ, եթէ երէկ տեսնէիր պատերազմի դաշտում, անպատճառ ո-ռիւծ Վահան կանուանէիր։

—Հօրեղբօր զոյգն է, ասաց Ծերունին շտապով և մի ծանր հոգոց հանեց սըրտից։—Առիւծ, առիւծ հօրեղբայրն էր, լուսահոգին։ Հօրից, պապից լսած չէի թէ այդպիսի մարդ կը լինի։ Ես ինքս էլ կայի Աւարայրի պատերազմում։ և այն տարուց յետոյ բնակվում եմ այս կողմերում։

Ցանկարծ նա փոխեց խօսքը։

—Ընկերիդ վէրքը վտանգաւո՞ր է։

Զինուորը պատասխանեց, որ սրի մի թեթև քերթուած էր, որ կտրել է մի երակ, և արիւնահոսութեան առաջն առնելու համար վիրակապ էր դրէ՛ը

—Ես կարող եմ շատ թեթևացնել

ցաւն, որդի, ասաց Ծերունին.—Հին ար-
հեստս չեմ մոռացել. Աւարայրի մարտից
յետոյ շատ արիւնահոս վէրքեր եմ բը-
ժշկել։

Զինուորը հանգստացրեց Ծերունուն,
որ ոչինչ վատնդ չը կայ իր վէրքից։

Գիւղը մօտ էր. շների հաչոցը բոր-
բոքին պարզ էր լսվում։ Զինուորները
գնում էին Ծերունու ոտով։

—Այո՛, Սահակ հայրիկ, երեկուայ մար-
տը փառաւոր էր, խօսեց Գրիգորը, երբ
նրանք բաւական տեղ լուռ գնացել
էին։

—Դու ուրեմն Վարդան սպարապետի
զինուո՞ր ես եղել, հարցրեց զինուորը։

—Այո՛, Վարդանի զինուոր։ Ո՞ւր է,
կա՞յ այժմ մի մարդ, որ կարողանայ ար-
ժանապէս սգալ այդ հսկայի մահը։ Մո-
ռանում են հետզհետէ։ Բայց նա մեռաւ
առիւծի պէս, նրա դիակը մեր աչքի ա-

ռաջ ընկած էր. բոլոր կենդանի մնացած զինուորները երեխայի պէս լաց էին լինում նրա վրայ. այնքան սիրում էինք լուսահոգուն։

—Խիստ պէտք է լինէր պատերազմը, նկատեց զինուորը ծերունուն շատ խօսացնելու համար։

—Ի՞նչ խիստ։ Նեռերի բազմութիւնը մթնացրել էր Աստուծու պարզ օրը։ Պարսիկները մրջիւնի պէս ցրվել էին դաշտի վրայ, փղերով կռվողները ջոկ էին, ձիաւորները ջոկ։ Ահ ու դողը պատել էր մեզ. կորցրել էինք մեր զօրավարներին, խառնուել էինք. ով ում հասնում էր, զարկում էր տապալում։ Սարսափելի ձայնն էր, որ որոտում էր ամեն կողմում։ „Քաջ տղերք, զարկէք“, գոչում էր ու վահանը ձեռքում աջ ու ձախ մահ էր տարածում։ Բայց, ո՜հ, նոյն երեկոյին մենք որոնում էինք քաջի դիակը։ Նրան

հս ճանաչեցի սրի խաչանիշ պատեանով, որ շատ անգամ սրբել էի։ Նրան քնած կասէիր, եթէ չը տեսնէիր սրան մէջ ցցուած նետը։—Ո՛չ, այդպիսի պատերազմ չի եղել և չէք տեսնելու։ Եւ այն ժամանակուայ հսկանները ուր են այժմ։ Երբ մի մի գնում եմ դէպի Տղմուտ գ

-տը, լացս գալիս է, յիշելով մեր զօրքի դասաւորութիւնը, յիշելով և հայ քաջերի դիակները, որ պատերազմից յետոյ լացով կոծով բանակ էին բերում։ Այժմ չը կան այն քաջերը. մնացել են թուլասիրտ տղաներ։

—Ոչ, հայրիկ, ընդհատեց Գրիգորը.—եթէ դու տեսնէիր երեկուայ կոտորածը, կասէիր որ դեռ քաջեր շատ կան։ Մեր Վեհափառը անձամբ եկել էր պատերազմ։ Կամսարական եղբայրները ինչ՞ր էին անում, Տէ՞ր Աստուած...

—Վեհափառն էլ կար, ինքը Մանդա-

կունին։

—Այո՛, նա ինքը։ Օրհնեց ամենքին, սիրտ տուաւ։ Իսկ երբ զինուորները յետ էին դառնում կոտորածից, նա նրանց առաջը գնաց սաղմոս երգելով։

—Ի՞նչ նմանութիւն անցեալին... Սիրտս մորմոքում է։ Պատմեցէք, որդիք, տեսնեմ էլ ինչ կար։

Սա տեսնելով որ արդէն մութը կոխել է, ծերուկը շտապով աւելացրեց.

—Այս երեկոյ հիւր եղէք ինձ և պատմեցէք։

Զինուորը համաձայնեցաւ, իսկ Գրիգորը ասաց, որ ինքն էլ կը գայ մի ժամ կը մնայ Սահակի մօտ և էլի կերթայ իր ազգականի տունը, ուր պիտի իջևանէր։ Նրանք գիւղը մտան։

Քիչ ժամանակից յետոյ գիւղականի պարզ յարկի տակ վառած էր կրակը։ Սահակի հարսը ընթրիքի ետևից կացաւ,

իսկ միւսներր շրջապատելով զինուորին, խօսեցնում էին երեկուայ օրի մասին։ Հիւրի դաղուստը արագաբար տարածուել էր գիւղում և շատ գիւղականներ հաւաքուել էին պատմութիւնը լսելու համար։ Նախ իմացան, որ զինուորի անունը Ատոմ էր, Հրահատ իշխանի մարդկանցից մէկը, որ գնում էր Դուին մեծամեծներին և յատկապէս Կամսարական տիկնոջ պատերազմի անցքը պատմելու համար։

„Պարսից զօրքը, պատմում էր Ատոմ, բաժանուած էր չորս գնդի, որոնցից մէկը պատկանում էր Սիւնեաց իշխան ուրացեալ Գրիգոնին։ Այդ գունդը ամենից սրտապինդն էր և աշխատում էր խախտել մեր զօրքի ձախ թեւը։ Սպարապետը հրաման ղրկեց մեր միւս գնդերին սպասել, մինչև ինքը կը ցրուէր Սիւնեաց և Կասշաց գունդերը։ Մինչդեռ նա այդ

բանն էր գլուխ հանում, պարսից միւս գնդերը մեզ վրայ յարձակուեցան և քանդեցին մեր կարգ ու կանոնը։ Պատերազմը անհնարին սաստկացաւ։ Շատերը ցրուեցան, իսկ շատ շատերը կը ցրուէին, եթէ չը տեսնէին մեր մարզպանի, Սահակ Բագրատունու մեծ գործը։ Սա տեսնելով պարսից սպարապետ Ամրներսէհ Սաղարին, գնաց դէպի նրան։ Սպարապետը ամբողջ արեաց ազգի մէջ հռչակաւոր է իբրև մի անհնարին քաջ պատերազմող։ Մեր բոլորի սիրտը ջուր կարեց երբ տեսանք նրան, որ պատրաստվում էր աշտէն խրել մարզպանի կողի մէջ։ Բայց Բագրատունին շտապեց նախ ինքը նիզակ արձակել նրա վրայ. նիզակը սահեցաւ ընկաւ գետնին, չը կարողանալով ծակել Ամրներսէհի կարծր զրահը։ Կատաղեց վերջինս և նոյնպէս զարկեց նիզակը, բայց նոյնպէս անցաջող. զրահը

պաշտպանեց և մեր մարզպանին։ Ահա այդ ժամանակ տաքացաւ սոսկալի մարտը. երկուսի ամեհի ձիերը միմեանց մօտեցան, ծառացան. նրանք, ինչպէս առիւծներ, յարձակվեցան միմեանց վրայ։ Բռնեցին միմեանց մազերից, կռվում և կռվում էին, միմեանց ծեծում էին։ Մարզպանի բանը պրծաւ, աղաղակեցին մի քանիսները մեր կողմից, լաց լինողներ էլ կային։ Բայց յանկարծ տեսան, որ վիթխարի Ներսեհը ձիուց ընկաւ. էլ չը գիտենք թէ ինչպէս, բայց նա շուտով անհետացաւ կռւի միջից։ Այդ իսկ ժամանակ սպարապետը Կամսարական եղբայրների հետ մոլեգնաբար վրայ տուին։ Մրրկի պէս անցնում էր դաշտի վրայով Ներսեհ Կամսարականը և նրա հետից իմ տէրը, Հրահատ իշխանը։ Դուք տեսել էք թէ ինչպէս հասած թուրը գետին է թափվում, երբ թթենու ճիւղե-

րից մեկը սատանում է սասսիկ հարուած։ Ահա նոյն օրինակ կոտորվում, գետին էին ընկնում պարսիկները։ Սպարապետը սպանեց պարսից մի զօրապետին, իսկ Ներսէհը մի ուրիշին այնպէս սասսիկ զարկեց, որ նա ձիու գլխով թռաւ, գետին գլորուեց։ Մինչ այդ ամենը կատարվում էր, յետ դարձան փախչողները և գործը վերջացրին։ Պարսիկները հաղթական դառան, մենք յաղթեցինք»։

Գիւղացիները ապշած էին մնացած։ Իսկ Ծերունի Սահակի աչքերում երևացին արտասուքներ։ Նա շնորհակալութեան ջերմ աղօթք արաւ և էլի սկսեց Ատոմին հարց ու փորձ անել, մի անգամ ասածը երկու երեք անգամ կրկնել տալ։

—Ատուած յաղթութիւն պարգևեց մեր մարդպանի մենամարտով, վերջացրեց Ատոմը և բոլորը ընթրիքի նստեցին։

Ե

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐ

Նոյն տարուայ սեպտեմբեր ամիսն էր։ Հայաստանի դէմքը կրկին էլի տխուր էր։ Հիւսիսից հետզհետէ հասնում էին աղետալի լուրեր։ Երեք ազնուազարմ այրիներ սգում էին իրանց դառն բախտը։ Մէկն էր Սահակ մարզպանի կինը, միւսը Վասակ Մամիկոնեանի կինը և երրորդը Հրահատ Կամսարականի կինը։ Վերջինը դեռ չէր մոռացել այն սուր կսկիծը, որ թողել էր նրա սրտում փոքրիկ Խորէնը, և ահա կորովի ամուսնու կորուստը դալիս էր սև օրը աւելի ևս մթնացնելու։ Ինքը Վահան սպարապետը փակուած էր Տայոց աշխարհի ծմակոտ վայրերում հարիւր հատ միայն հաւատարիմ մնա-

ցած զօրականների հետ։ Նրա թշնամի-
ները գոհութեամբ շփում էին ձեռքները
և հպարտ հպարտ ասում. „Տարօնեցին
հեռու չը գնաց. և շատ էլ լաւ եղաւ.
նա չը կարողացաւ մարդկանց աչքը մո-
խիր փչել“։ Իսկ Ծիրունի Յովհան կաթո-
ղիկոսը տրտում տխուր նստած
էր Դուինում։ Նրա հայրական սիրտը ցա-
ւում էր Հայաստանցու հէք զաւակի
վրայ։ Ի՞նչ կը լինի վերջը, ի՞նչ կը դառ-
նայ Վահանը—ահա հարցեր, որոնք կըտ-
րել էին հայրապետի քունը։ Նա աղօ-
թում էր...

Ո՞վ էր այդ ամենի պատճառը։—Մի
վատշուէր օտարազգի, մի խարդախ
մարդ։

Դա Վախտանգն էր։ Սպասաւորելով
պարսիկներից. նա յանկարծ իմացաւ Մի-
հրան զօրավարի ապշանքը դէպի Վրաս-
տան և այդ ժամանակ յիշեց, որ երբեմն

հայերը նրանից օգնութիւն էին խնդրել և դաշնակից էին իր հետ։ Ուստի հայերին օգնութեան կանչեց և իրը սըրանք իրանց անխարդախ հաւատարմութիւնը ցոյց տալու համար գնացին ցոյց տուած տեղը, տեսան որ համարեա մենակ պիտի կռուեն պարսից դէմ, իրանք վրացիք շատ քիչ էին, իսկ հոների խոստացած օգնութիւնը չը կար։

Պատերազմի ժամանակ շատ քաջութիւններ գործեցին հայերը, բայց վերջ ի վերջոյ ստիպուեցան յետ դառնալ, որովհետև հայ բանակի մի մասը անցել էր թշնամու կողմը։ Մեծ էր այդ կորուստը, բայց և ոչինչ ուրիշ կորուստների մօտ։ Սահակ Բագրատունին, Խորենացու լուսամիտ մեկենասը, ընկաւ պատերազմում. ընկաւ և Վասակ Մամիկոնեանը, իսկ Հրահատ Կամսարականը գերի ընկաւ պարսից ձեռքը. ձին սասաիկ սր-

շաւիղիս գցել էր նրան, իսկ ոտով երկար չէր կարողացել փախչիլ։ Միհրանը նրա վրին մի շղթայ անցկացնելով, տարաւ իր հետ։

Վահան սպարապետը իր մօտ մնացած հարիւր մարդկանցով ամրացել էր Տայոց աշխարհի Մկնատունջ գիւղում, ժամէ ժամ սպասելով թշնամուն և մի ժամանգամ չը լքվելով և չը մոռանալով թշնամու զօրութեան մասին։

Միհրանը թէև գիտէր հայերի անհաշտ քանակութիւնը, բայց չէր համարձակվում պատերազմ սկսել Վահանի հետ։ Եւ համոզուած լինելով թէ իր զօրութիւնն ու տարած յաղթութիւնը բաւական խախտած կը լինի հայ սպարապետի արիութիւնը, մարդ ուղարկեց նրա մօտ և պահանջեց անձնատուր լինել։

«Դու ապստամբեցար մեր դէմ և ահա այդ դրութեանը հասար, իմաց էր տա-

լիս Միհրանը.—ինքդ էլ գիտես թէ ինչ է քո պատիժը։ Բայց որովհետև քաջ ես, բաւական է միայն յօժարուիս խաղաղութեամբ հպատակուիլ արեաց արքային. այն ժամանակ ես կը հաշտեցնեմ քեզ նրա հետ և կաշխատեմ որ չը զրկուիս քեզ արժանի պարգևից։ Պէտք չէ թագաւորի ծառայութիւնը անդոսնել»։

Ի՞նչ կանէր մի ուրիշը, եթէ լինէր Վահանի տեղ։ Մի հարիւր մարդու հետ մնացած, քաջ զինակիցներին կորցրած, ընկած հեռու հիւսիսում մի լեռնական գիւղի մէջ, նա ոչ մէկից օգնութիւն չունէր սպասելի, իսկ Միհրանը կարող էր իր զօրակոյտով հուպ տալ, ձմրել նրան։ Եւ դեռ այսպիսի դրութեան մէջ նրան առաջարկում են հաշտութիւն, պարգևներ։

Ով ինչպէս կուզէր, բայց Վահանը պատասխանեց Միհրանին.

Պարսից Ծառայութիւնը ես չեմ անդոնում, այլ ինքը Թագաւորը։ Ծառայութիւնը սուրբ է, երբ մարդու ճշմարիտ արժանիքն է փայլեցնում։ Թագաւորն է ծառայութեան գլուխը և նա պիտի լաւ նայէ, որ կարողանայ լաւը վատից որոշել։ Բայց ՈՐտեղ տեսանք թէ նա գիտէ արժանաւորին ըստ արժանեաց դատել։ Զեզ իսկ յայտնի է, որ Պերոզը իր դիւանում ամենքի առաջ ասել է, թէ աշխարհումս վատ մարդը և անպիտան գունդը ասորին է, բայց ասորուց վատթարագոյնը հայն է։ Եւ այս խօսքերը Թագաւորի բերանից դուրս էին գալիս այն ժամանակ, երբ հայերը պարսկական զօրքերի շարքում արիւն էին թափում նրա համար, երբ հայոց եկեղեցին աղօթում էր նրա երկար կենցաղավարութեան համար։ Եթէ դու լինէիր մի հայ, ի՞նչպէս կը լսէիր այդ վկայութիւնը։ Զը

գիտեմ, բայց ինձ համար կասեմ, որ հոգով յօժար կը լինէի մահուանս հրամանը լսել Պերոզից, քան թէ այդ խօսքերը։ Ինչ վերաբերում է խոստումներին, կասեմ որ այդպիսի պարգևներ շատ եմ ստացել այն ժամանակ, երբ խաւարը պատել էր միտքս և ես ուրացել էի իմ հայրերի պաշտած Աստուածը։ Բայց այժմ դրանք ինձ համար գին չունին։ Ես պատրաստ եմ ապրել իբրև մի յետին աղքատ, պատրաստ եմ չարաչար մահով վերջացնել աղքատի ձեռքս, բայց ոչ երբէք դաւաճանել հայրենիքիս Պերոզ արքայի շքեղ պարգևների յոյսով»։

Կատաղեց Միհրանը։ Մինչդեռ իր մտքում Վահանի կորուստն էր նիւթում, վրայ հասաւ Պարսկաստանից արքունի սուրհանդակը։ Պերոզը հրամայում էր Միհրանին Պարսկաստան ուղարկել։ Այդ հրամանը խորտակում էր պարսիկ զօրա-

վարի մի խորհուրդը, որ յղացրել էին դաւաճան ուրացողները։ Հաւատացած լինելով, որ Վահանի և միւս ապստամբ հայերի հոգին կաթողիկոսն է, Միհրանը մտադիր էր մտնել անպաշտպան Դուինը և Մանդակունուն գերելով Պարսկաստան տանել իր հետ։ Բայց նա էլ ժամանակ չունէր, շտապեց ճանապարհ ընկնելը

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Զ

ՅԱՒԱԿԻՑ ԵՂԲԱՅՐ

Միհրանի գնալը եթէ ուրախառիթ էր բոլորի համար, անհնարին կսկիծ պատճառեց Ներսէհ Կամսարականին. պարսից զօրքերի հետ Պարսկաստան էր գնում կալանաւոր Հրահատը, որին մի դառն վախճան էր սպասում Պերոզի առաջ։ Արդէն Ատոմը իմաց էր տուել իշխանին Զարուհի տիկնոջ դրութիւնը։ «Տիկինը խելքը կը կորցնէ», ասել էր Ատոմը վճռաբար. «գիշերները քուն չունի, միշտ լաց է լինում, ասում է՝ թողէք մի անգամ էլ տեսնեմ նրան և ապա տարէք»։ Անքուն գիշերներ շատ էր անցկացրել և ինքը Ներսէհ իշխանը։ Մի այդպիսի եղ-

բոլ կորուստը դուցէ նա կարող կը լի-
նէր մոքից դցել, եթէ չը լինէր հայոց
փոքրաթիւ բանակը, որ մի օր էր մո-
ռանում Հրահատի անունը։ Զինուորները
միշտ պատմում էին նրա քաջագործու-
թիւնները. գովում էին, և այդ բոլոր
խօսքերը վերջացնում էին դառն ափսո-
սանքի ախ ու վաշով։ Ինքն սպարապետն
էր, որ մինչև այժմ ոչ մի թշուառու-
թեան մէջ չէր ցոյց տուել ախուր դէմք,
Միհրանի չուն լսելուց յետոյ խիստ յու-
զուած էր երևում։ Պարզ երևում էր, որ
այդ սակաւախօս մարդը մոքով ողբում
է իր քաջ նիզակակցի կորուստը։ Ցիրա-
ւի որ Հրահատի տեղը ոչ ոք չէր կա-
րող բռնել։

Միհրանի հաւիից հայոց զինուորները
բռնեցին Դուինի ճանապարհը։ Այդ տեղա-
փոխութեան ժամանակ մի օր Ներսէհ
Կամսարականը իր չորս հաւատարիմ ծա-

ռանելի հետ անհետացաւ Վահանի բանակից։ Երկու օր զօրախումբն սպասեց նրա վերադարձին, բայց ի զուր։ Ի՞նչ էր պատահել նրան, այդ ոչ ոք չէր գիտէր։ Վահանը ճարահատեալ գլխակոր շարունակեց ճանապարհը։

Մութ աշնանային գիշեր է։ Սոսափիկ հեղեղը թափվում է սեւ թոյլ ամպերից. գժոխային թանձր խաւարը չի թոյլ տալիս ոչինչ բան տեսնել։ Միայն Բաղրեւանդ գաւառի Բագաւան գիւղը տանող ճանապարհի վրայ վազող ձին է իմանում թէ ուր է գնում։ Խելօք կենդանին մինչև անգամ չի ընկնում մեծ լճակների մէջ, որոնք անձրեւի ջրից են կազմվել ճանապարհի խորաւորատեղերում։ Նա վազում է, երբեմն կանգ է առնում և իր գլուխը դէս ու դէն ցցելով հոտոտում է օդի մէջ։ Ձիու տերը լուռ է, անշարժ. ամեն ինչ թողել է ձիու կամքին։ Եւ

իր սեփական անձի մասին էլ շատ չի մտածում ձիաւորը. նրա վերարկուն էլ բաւական կախ է ընկել ձիուց, նա կարծես չի զգում որ անձրևն զգալի կերպով վարարել է։ Խոր ձորերից անընդհատ լսվում են ահեղազոչ հեղեղատների որոտոցները. ամեն մի առուակ պետք էր դառնել և սպառնում էր կլանել ամեն ինչ, որ իր ճանկն ընկնի։ Բայց ձիաւորը ուշ չի դարձնում դրանց վրայ։ Նա չի զննում և ձիուն, որ յանկարծ փոխեց քայլերը և սկսեց աւելի հանդարտ գընալ։ Թեազդամի հասկանալով որ դա առանց պատճառի չէր, ձիաւորը յետ գցեց գլխի ծածկոցը և անձրևի տարափի միջով տեսաւ հեռու կրակները։ Այդ ազօտ լոյսերը նրան հանգստութիւն տուին։

Կէս ժամից յետոյ ձիաւորը մտաւ Բազաւան գիւղը, մի խրճթի մօտ գնաց և

դրսի դուռը ծեծեց։ Խսկոյն դուրս՞ վազեց մի երիտասարդ, որ ներս թողեց ձիաւորին։

—Ձին կապելու հնար տես, ասաց եկեւորը, ժամանակ չը տալով անգամ որ իրան լաւ ճանաչէ տանէց դուրս եկածը, որ իսկոյն բռնեց սանձը և ձին տարաւ դէպի մի կողմ։

Մանելով մի բոլորովին թափուր սենեակ, եկեւորը դէն դցեց իր ջուր կարած վերարկուն և կախ արաւ պատից, որ ջրաքամուի։

Դա Ներսէհ Կամսարականն էր։

—Ի՞նչ լուր, Ատոմ, մի բան շինե՞լ ես, թէ արդէն ամէն ինչ վերջացել է, դարձաւ իշխանը դէպի նոյն երիտասարդը, որ ձին տեղաւորելուց յետոյ յետ դառաւ տուն։

—Բանակը ոռտեղ է։

—Մի քիչ բան եմ շինել, աէր իմ,

Երէկ ես հասայ այստեղ և իմացայ որ իշխանը այս մի զօրաբաժնի հետ է, որ այժմ իջևանել է գիւղի մօտ և ոչ թէ այն բանակում, որ մնացել էր սարի միւս կողմում, ինչպէս դու էիր կարծել. ես ուզում էի յետ դառնալ և իմաց տալ...

—Կարծ՝ կարիր, Ատամ, գիւղացիներից ես էլ իմացայ, որ Միհրանը այս մի բանակումն է և նրա հետ են բոլոր գերիները. դու այն տես թէ ինչ արիր:

—Պարսիկ զինուորի հագուստով մտայ բանակը. տեսայ իշխանին և մի յարմար ժամանակ ճարելով աչքերովս նշան արի, որ փախչելու պատրաստ լինի. դու գիտես որ իշխանը լաւ է հասկանում այդ նշանները...

—Պարձեալ հեռացար, ընդհատեց իշխանը խիստ ձայնով.—յետոյ ի՞նչ է դառնում:

—Իրիկնապահին մի վրացի գերի կար

ընկած աղբրի մօտ. խեղճին չուաններով պինդ կապուած էին զինուորները, իսկ իրանք մերձակայ այգում խումբում էին. ես վրացուն ազատեցի և փախցրի... բայց վերնահագուստը փոխեցի...

Առամը տեսնելով որ Կամարականի աչքերը վառվում են, յանկարծ փոխեց իր ոճը և շտապով ասաց.

—Նրա շորերն այստեղ են, քեզ համար...

—Լաւ, հասկացայ. ուրեմն ես վրացի դերի կը դառնամ, իսկ դու պահապան պարսիկ զինուոր և այսպէս բանակ կը մտնենք:

—Այո:

—Իսկ այստեղ մեր ձիաները կը պատրաստէ Ներսէհը, այնպէս չէ:

—Այո, և Վարդը:

—Մոռացայ որ նա ինձ հետ չէր: Ես թողեցի նրան Ծմակաձորում, ուր նա կը

սպասէ մեզ Վարշամի հետ։

—Քանի՞ ձի ունինք։

—Չորսը, տէր։

—Չորրորդը լա՞ւն է։

—Ես ինքս հաւանեցի և գնեցի։

—Ուրեմն շտապիր գնանք։

—Անձրև է, տէր։

—Ամենալաւ ժամանակ։

Կարճ միջոցում Ներսէհը հագաւ վրացու զգեստը, իսկ Ատոմը գինուորի զրահը. նրանք հեռացան տանից։

Անձրևը այժմ այնքան յորդառատ չէր, բայց բարակ էր մաղում։ Երկու հոգի ձեռներով գետինը շօշափելով ձորն իջան և համարեա մագլցելով ձորի ուղղաձիգ կողը սկսեցին դէպի վեր բարձրանալ։ Այդ իսկ միջոցին նեղքևի թփերի կողմից լսվեց մի խլրտիւն. Ատոմը, որ այդ տեղից մօտիկ էր, հանեց սուրը և կամենում էր թփի վրայ յարձակուիլ, բայց

կանգ առաւ, լսելով թէ ինչպէս թփի քամակից մէկը ասաց հայերէն. „Անի-ծեալ անձրև... պահ մի դադարէիր...“ Ատոմը շոշափելով բռնեց թուփը, իսկ նրա ետևից ոտների ու ձեռքերի վրայ սողալով գնաց Ներսէհը։

—Եթէ դաւաճաններից լինի, խնայել չը կայ, փսփսաց վերջինս։

Խաւարի մէջ Ատոմը զլխով հաւանութեան նշան արաւ, կարծես թէ իշխանը շատ էր տեսնում թէ ինչ կայ իր առջևը։ Նա հանդարտ ձայնով հարցրեց. „Ո՞վ ես“։

Անծանօթը իսկոյն պատասխանեց թփի ետևից բարկացած ձայնով։

—Անիծեա՛լ, սատանայի՛ն տեսնէի, այդքան չէի վախենալ, չե՞ս կարողանում բարձր խօսել։ Ես քեզ չեմ տեսնում։

—Ձայնդ ճանաչում եմ, ասաց Ատոմը նոյն ցածր ձայնով.—եթէ անունդ էլ իմանամ, շուտ կը պրծնենք այստեղից։

—Լսիր ուրեմն, բայց իմաց որ ձեռիս սուր կայ։ Ես Հրահատ Կամսարականն եմ։

—Շտապիր, տէր իմ, իջնել ձորը. ես Ատոմն եմ։

Ներսէհը ուրախութիւնից համարեա գոռալով ընկաւ ձորի յատակը, ջրի մէջ. և այդ րոպէին էլ հասան Ատոմն ու Հրահատը։ Երկու եղբայրները այդպիսի սարսափելի դրութեան մէջ միմեանց գըրկախառնեցին և համբուրուեցան։ Ապա երեք հոգի ձեռք ձեռքի տուած առաջ գնացին. մեքենայաբար նրանք դատն ամենից լաւ ճանապարհը. հենց այդտեղ էր ձորի սկիզբը, որ սկսվում էր մի տափարակ դաշտավայրից։ Նրանք բարձրացան այնտեղով, ուսկից ձորն էր թափվում մի փոքրիկ առուակ, որ գոյացել էր տափարակի վրայ ժողովուած ջրից։

—Ես կարծում էի թէ մենակ պիտի

կատարեմ այս գործը, խօսեց Հրահատը, երբ նրանք մօտ էին խրճթին.—Ատոմը միայն այն էր հասկացրել թէ պէտք է փախչել. ես չէի կարծում թէ դու էլ այստեղ ես, եղբայր:

—Ո՞վ էր տուել քեզ այն սուրը, որով սպառնում էիր Ատոմին, հարցրեց Ներսէհը:

Ատոմը շտապեց պատասխանել.

—Մոռացել էի յայտնել, որ իշխանի վրանի հետևում բռած են մի քանի մացառներ. դրանց մէջ ես թողել էի մի սուր:

—Այո՛, ես այդ իմացայ այն ժամանակ, երբ դու վրանի առաջ նստած, վահանիդ վրայ ձեռքով մի սուր էիր նկարում և մի քանի անգամ մատդ գէպի մացառներն էիր տանում: Գիշերը պահապանս նկատեց ժամանակը ձեռս դուրս տարի վրանի տակովը, սուրը

բանեցի, քակեցի կապերս և դուրս եկայ։ Վերջին օրերս Միհրանը այնքան խիստ չէր վարվում հետս. կարծում էր թէ այլևս փախչելու հնար չը կայ։

Նրանք մտան տնակը. ճրագի լոյսով միմեանց նայեցին, սարսափեցան. ամենից վատ էր Ներսէհի դրութիւնը. նա իսկոյն հանեց շորերը, կրկին հագաւ իր թրջած վերարկուն։

Գիւղի աքաղաղները նոր էին սկսել կանչել երբ չորս ձիաւորներ հեռացան գիւղից ամենապարանոք։

Է

ՓԱՌԱՀԵՂ. ՎԻՐԱՒՈՐ

Զմեռն անցաւ։

Վահանը Դուինի մէջ բաւական կազդուրուել էր իր մարդկանց հետ։ Բանակցութիւնները նախարարներից շատ կողմնակից որսալու համար շարունակ զբաղեցնում էին սպարապետին։ Նրան վերջապէս յաջողուեց իր կողմը գրաւել երկու հզօր նախարարներ, որոնցից մէկն էր Որդի՝ Դիմաքսեան տոհմից, իսկ միւսը կոչվում էր Քաջաջ Սահառունի։ Մի քանի ժամանակից ի վեր այդ երկուքը հիւր էին Դուինում, ուր եկել էին սպարապետի և կաթողիկոսի հետ մանրամասն խորհրդածութիւններ անելու ա-

պագայ գործունէութեան մասին։

Հաղիւ էր ձմեռնային բուքը տեղի տուել մարտի արեգակի տաք ճառագայթներին, մի զուժկան հասաւ Դուին, ու օձիքը պատռելով յայտնեց իշխաններին թէ Պարսից անհամար զօրքերը Երասխը անցած՝ դիմում են դէպի Արտաշատ։ Հետևեալ օրը մի ուրիշ զուժկան իմաց տուեց, որ Պարսից զօրքերի հետ են և ուրացեալ նախարարները, որոնք սպարապետի ուր լինելը իմացել են և կամենում են յանկարծակի պաշարել տալ Դուինը և պատուհասել Վահանին ու իր կողմնակիցներին։ Զօրքերի չուն խիստ շտապողական է, ասում էին զուժկանները։

Կազմուեցաւ մի ժողով Յովհան կաթողիկոսի մօտ։ Այդտեղ բացի Վահանից կային և Ներսէհ ու Հրահատ եղբայրները, Ոլդի Դիմաքսեան, Քաջաջ Սահառու-

նին և մի քանի քաղաքացի վաճառա-
կաններ։ Կաթողիկոսը յայտնեց, որ իրանք
շատ նեղ դրութեան մէջ են, զօրք ու
օգնական չունին, այն ինչ թշնամին ա-
հագին բազմութեամբ դիմում է իրանց
վրայ։ Վերջը հայրապետը կցեց.

—Սակայն այս բոլորը ես չասացի, որ
դուք կհատուիք, որդիք, այլ ձեր անեղի-
քը վճռէք։ Զը լինի թէ մարդկային զօր-
քի բազմութիւնը ձեզ շուարեցնէ։ Մեր
Երկնային Վարդապետն իր օրինակով ցոյց
տուեց, որ իր ճշմարիտ զինուորը ան-
վախ պիտի գնայ ամեն տեսակ տանջան-
քի առաջ։ Մահուան սորուկներ ենք ա-
մենքս, որդեակներ, բայց պարզերես
քրիստոնեայի մահը ուրիշ բան է։ Աշխա-
տենք այդ մահը ձեռք բերել։ Ահա ես էլ
տարիների ծանրութեան տակ խոնարհ-
ուած ծերունիս, պատրաստ եմ ձեզ
հետ լինել...

Բոլոր ժողովականները խիստ յուզուած էին հայրապետի այդ խօսքերի վրայ։ Վահանը սկսեց խօսել։

—Քաջ գիտացէք, Վեհափառ տէր և իմ արի նիզակակիցներ, որ Պարսից թագաւորին մենք ենք միայն։ Նրանք գալիս են մեզ պատժելու, իսկ ժողովրդի հետ գործ չունին։ Եթէ մեզ պէսները չը լինին, ժողովրդի կողմից ոչինչ ընդդիմութիւն չեն տեսնիլ պարսիկները։ Լաւ յիշեցէք, որ դեռ Սարներսէհը ունէր հրաման՝ բռնել մեզ և կենդանի տանել Պարսկաստան, բայց Ներսէհապատի ճակատամարտը խորտակեց նրա ցանկութիւնները։ Այժմ նոյն հրամանով գալիս է, ինչպէս լսեցիք զուժկանները։ Զարմիկը Հազարաւուխտ մեծ սպարապետը և նրան պիտի օժանդակեն ուրացեալները։ Ես կարծում եմ, որ եթէ մենք բոլորս կարողանանք ճողոպրիլ մահից կամ անարգ

գերութիւնից, պարսից բանակը ձեռնուն-
նայն պիտի մնայ։

Ամենքը հաւանեցին սպարապետի այդ
միտքը, իսկ Հրահատ Կամսարականը հարց-
րեց, թէ ինչ կերպով կարող էին բոլոր
միաբան նախարարները աղատուիլ պարս-
սից սրերից։

—Խոհեմութիւնը պահանջում է, որ
Թողնենք Դուինը, պատասխանեց Վահա-
նը,—և Թողնենք այնպէս որ մեզանից և
մեր ընտանիքներից ոչ ոք չը մնայ այս-
տեղ։ Մեր վերհափառ հայրն էլ պիտի
հեռանէ մեզ, յաւ իմանալով որ ինքն էլ
նոյնպէս թշնամի է պարսիկներին, որպէս
մեր խորհրդատուն և մեզ դեկավարողը։
Մենք դուրս գնանք քաղաքից, Թող այ-
նուհետև Հաղարաւուխտը հայածէ մեզ
և եթէ կարողանայ՝ բռնէ։

Յով հան կաթողիկոսը ուրախութեամբ
յայտնեց, որ ինքը կը գնայ ամենքի ա-

ռաջ. Նախարարներն էլ ընդունեցին այդ վճիռը։ Բայց քաղաքացիներից մէկը, Թադէոս անունով, ընդդիմացաւ։

—Դուք կը հեռանաք, ասաց նա, բայց ո՞վ կը հաւատացնէ պարսիկներին, թէ Դուինի մէջ չը կայ մի հատ ձեր կողմնակից։ Ընդհակառակը, ձեր գնալուց յետոյ նրանք պիտի խուզարկեն ամէն մի տուն՝ ձեզանից մէկին գտնելու համար։ Քաղաքը կը վնասուի։

—Լաւ խօսք է, յարեց Ներսէհ Կամսարականը,—մտածենք թէ ինչ ենք կարող անել։

—Մի հնար կայ միայն, ասաց Վահանը,—քանի որ քաղաքը շրջապատած չէ, հեռացրէք ձեր ընտանիքները Վեհափառի հետ։ Իսկ մենք, պատերազմող մարդիկս, կը սպասենք, երբ պարսիկները կը պաշարեն, պատերազմով դուրս կը գնանք նրանց առաջը. եթէ կարողանանք՝ կը

ձեղքենք նրանց շարքերը, եթէ ոչ՝ կընկնենք սուր ի ձեռին։

—Դա չը նշանակեց պարսից սրերից ապատուիր, որի մասին դուք խօսեցիք սկզբում, Վահան սպարապետ, ասաց Բաջաջ Սահատունին, որ մինչև այդ ժամանակ լուռ էր։

—Մի՞թէ ապատուել նշանակում է անպատճառ ապրել և մի՞թէ ապրիլը կամ մեռնելը մեր ձեռքին է։ Իբրև սպարապետ՝ իմ կամքն այսպէս է։

—Իրաւունք չունենք ընդդիմանալու ձեր կամքին, խօսեցին ամենքը և գնացին պատրաստուելու։

Նոյն գիշերը Ներսէհ և Հրահատ Կամսարականները պատրաստում էին իրանց ընտանիքները ճանապարհ դնելու։ Ներսէհի որդիքը բարեբախտաբար այդ միջոցին գտնվում էին Շիրակայ գիւղերից մէկում և Դուինում մնացել էր միայն

նրա կինը։ Իսկ Հրահատը Խորէնից յետոյ անզաւակ էր։ Տեսային աւելորդ իրեղէն-ները պահ տուին զրացիներին։

Կէս դիշերին Կամսարականները հրա-ւիրուեցան սպարապետի մօտ, ուր կա-յին միւս իշխանները և ժողովրդի բազ-մութիւնը։ Վահանը մաս-մաս բաժանեց ամբոխը և իւրաքանչիւր մասը յանձնե-լով մի իշխանի, պատուիրեց ամրացնել Դուինի բերդը։ Այդ աշխատանքով իշխան-ները զբաղուած էին մինչև միւս օրուայ արևածագը։

Հէնց նոր էին վերջացրել գործը և յետ էին դառնում դէպի տուն, երբ աշտա-բակների պահապաններից մէկը վազե-վազ հասաւ և յայտնեց Հրահատ իշխա-նին, որ Զրվէժ կոչուած տեղի մօտ նկա-տելի են սպառազէն մարդիկ, որոնց խում-բերը հետզհետէ ստուարանում են։ Հրա-հատը շտապեց դէպի աշտարակը։

Մի երկու-երեք ժամից յետոյ սպարապետն արդէն գիտէր, որ Խոսրովակերտից մինչև Զրվէժը կանգնած են պարսից զօրքերը։ Ամէն ինչ վերջացել էր, պէտք էր այժմ ուրիշ կերպ գործել։ Սպարապետը շուտով որոշեց իր անելիքը։

Նա հրամայեց բոլորին պատրաստ լինել։ Ինքը շտապեց մայր եկեղեցու բակը, ուր մի ջերմեռանդ աղօթք անելուց յետոյ ձի նստաւ։ Այդ ժամանակ կաթողիկոսի սպասաւորը լուր բերաւ Վահանին, թէ չը նայած որ պարսիկների զօրքը պաշարել է քաղաքը և սպարապետի կարգադրութիւնը փոխուել է, բայց վեհափառը պատրաստվում է զինուորների հետ դուրս գնալ քաղաքից։ Վահանը գընաց կաթողիկոսի մօտ։

Ոչինչ չէր ուզում լսել Մանդակունին, սպարապետի համոզեցուցիչ խօսքերը ապարդիւն անցան։

—Ես իբրև հովուապետ չեմ թողնիլ որ Քրիստոսի գինուորները առանց հոգևոր առաջնորդի գնան իրանց անձը պատարագելու։ Ես էլ ուզում եմ մասնակից դառնալ նրանց փառքին։ Եւ բացի դրանից գիտեմ որ եթէ անձիս պաշտպանութեան համար այստեղ մնամ, քաղաքս պիտի մատնեմ արիւնարբուշ թշնամու բարբարոսութեանը։ Լաւ յիշեր որ Միհրանը Տայոց աշխարհից ուզում էր գալ այստեղ ինձ կարանաւորելու։ Այժմ էլ այդ նպատակը չի մոռացուել։ Ո՛չ, ես ինչ հովիւ կը լինեմ, թէ իմ հօտի բարօրութեան համար անձս զոհել չը կարենամ։

Վահան սպարապետը այդ խօսքերին պատասխան չը տաւ և դուրս գնաց։

—Գնա պատրաստիր ամենքին, ես էլ շուտով կը գամ, ասաց Հայրապետը։

Կէսօրից անց էր, երբ մէկ-մէկ սկսեցին

հաւաքուել ձիաւորները։ Ամենից առաջ հասաւ մի սպառազէն երիտասարդ, որի դէմքի վրայ մի հատ մազ չը կար։ Նա արիաբար առաջ քշեց ձին և շնորքով գլուխ տուաւ սպարապետին։ Վահանը զարմացած էր։

—Մեր խմբի մէջ քեզ պէս զինուոր առաջին անգամն եմ տեսնում, ասաց նա.

—Ինչպէս յանկարծ ընկար մեր մէջ։ Խորհուրդ չէի տալ այդպէս վստահ լինել զէնքերիդ վրայ, ընկեր. դէմքդ ցոյց է տալիս, որ սարսաւարտ առաջին անգամն է տեսնում գլուխդ։

—Այո՛, տէր, պատասխանեց ձիաւորը, առաջին անգամն է որ վահան ու կապարճ եմ կրում։

Սպարապետը մի քանի վայրկեան ուշադրութեամբ զննեց զինուորի դէմքը և ապա թէ հանդարտակ ասաց.

—Իշխանուհի Կամսարականն, սպառա-

գինուած՝... ի՞նչ եմ տեսնում, տիկին։

—Դուք լաւ ճանաչեցիք, Վահան սպարապետ, պատասխանեց նա ծիծաղելով։

—Ձիաւորը Հրահատ իշխանի ամուսինն էր։

—Զափազանց երկիւղալի խաղ էք խաղում, խօսեց սպարապետը դժգոհութեամբ։

—Շատ շատ այդ խաղը կը վերջանայ մահով. ի՞նչ արած, իշխան, թէև կին ենք, բայց չեմ կարծում որ մեր զառամեալ վեհափառից էլ տկար լինենք։ Բացի դրանից ձեր կարդադրութիւնը...

—Իմ կարդադրութիւնը փոխուած է, քաղաքը պաշարուելուց յետոյ ես չէի ուզիլ որ դուք մեզ հետ վտանգի ենթարկուէիք։

—Բայց ի՞նչ վտանգ կայ, Վահան իշխան. իմ ամուսինը պիտի գնայ պատերազմի. ով գիտէ մեռնի կամ գերի ընկնի

և ես նրանից յետոյ դարձեալ կեանք վարեմ։ Ոչ, տէր, թոյլ տուէք որ մենք էլ մեր կեանքը աղատ պահենք։ Իմ կամքն է մեռնել միատեղ, ապրել միատեղ։

—Բայց ո՞ւր է իշխանը, հարցրեց Վահանը, դարձեալ ոչինչ չունենալով պատասխանել տիկնոջը, ինչպէս կաթողիկոսին։

—Նա չի ուշանալ, պատասխանեց Զարուհի տիկինը։—վերջին կարգադրութիւններն է անում ծառաներին։ Մենք երեք հոգի ենք, դիտէք։

—Երևի միւսն էլ Սահականոյշ տիկինն է։

—Այո՛, իսկ երրորդը կը լինի Ատոմի ամուսինը։

Մինչդեռ այդ խօսակցութիւնը անցնում էր նրանց մէջ, ժողովուեցաւ զինուորների մեծ մասը. եկան Դիմաքսեանը, Սահառունին և դրանց հետևից դուրս

եւաւ Յովհան կաթողիկոսը։ Վերջինս ապաստաւոր չունէր իր հետ, ինքն էլ հագնուած էր մի հասարակ վարդապետի պէս։ Ամենից յետոյ հասաւ Ներսէհը, Սահականոյշ տիկինը և Սառոմը իր ամուսնու հետ։ Վահանը մօտեցաւ կաթողիկոսին և դաղտնի նրան մի ինչ որ բան յայտնեց։ Հայրապետը յուզուած սրրտով ժողով եց ամենքին, մի սրտառուչ աղօթքով օրհնեց զինուորներին։ Նրա ձայնը դողում էր, իսկ աղօթքը կիսած ժամանակը տեսնելով երեք տիկիններին, որոնք խորին ակնածութեամբ լսում էին աղօթքը կորացրած գլուխներով, Հայրապետը չը կարողացաւ զսպել իր արտասունքը. երկու խոշոր կաթիլներ գլորուեցան նրա չոր այտերով և անյայտացան ձիւնի պէս սպիտակ միրուքի մէջ։ Նուռով նա լռեց։

—Սրտապինդ լինինք, քաջալերեց սպա-

բապետը առաջ դուրս գալով.—Ծանր է մեր զրուԹիւնը, բայց Երկնքի տէրը տեսնում է մեզ։ Ներսէհ իշխան, եղբօրդ և երեք տիկնանց հետ գնա, մեր զինուորներից էլ մի յիսուն հատ վերցրու նրանց պաշտպանուԹեան համար։ Դուք, Վեհափառ հայր, ինչպէս կը կամենաք լինեք։

Որդի Դիմաքսեանը և Քաջաջ Սահառունին խնդրեցին որ հայրապետին իրանց յանձնէ։

—Թող այդպէս լինի։ Դէ՛հ, գնանք խաղաղուԹեամբ։

Խումբը շարժուեցաւ։ Ժողովուրդը, որ մեծ բազմուԹեամբ շրջապատել էր կաԹողիկոսին, Թախանձագին խնդրում էր մնալ։ Բայց Ցով հանը օրհնելով ամենքին քշում էր իր ձին։ Շուտով նրանք քաղաքի դռներին մօտ էին։

Սպարապետը առաջ գնաց, պատուի-

ելով միւսներին խումբ-խումբ յարձակուիլ զանազան կողմերի վրայ և շփոթել թշնամուն։

Կարճ միջոց անցած՝ պարսից շարքերը խառնուեցան. բարձրացան փայլեղի աղաղակներ, հրամայում էին ոչոքին բաց չը թողնել, բոլորին բռնել կամ սպաննել։ Սպարապետը մրրիկի պէս անցաւ շարքերի մէջ, աջ ու ձախ դիակներ փռելով. նրան հետևում էին սուսերամերկ թիկնապահները, արիւն թափելով։ Մինչդեռ պարսիկները մի տեղ էին ժողովում անքակտելի պարիսպ կազմելու համար, վրայ հասաւ Հրահատ Կամսարականը և ահեղաբար գոռալով, նիզակը ճոճելով, սլացաւ զօրքի մէջ. նրա օրինակին հետևեց Ներսէհը Ատոմի և միւսների հետ։ Ցարձակումն այնպէս սաստիկ էր և անակնկալ, որ շուարած պարսիկները շփոթուեցան, աջ ու ձախ փախան,

մեծաթիւ դիակներ տալով Հայոց սուրբերին։ Վահանի և Համասպատանի խմբերը անցան անվտանգ և աշտանակեցին եւրիվարները։

Այսպէս բախտաւոր չեղաւ Հայրապետի խումբը։ Մօտենալով պարսիկներին, Դիմաքսեանը և Սահառունին ահագին աղաղակներով շարքերի մէջ խուժեցին, կամենալով ճանապարհ բանալ կաթողիկոսի առաջ, որ զենուորներով շրջապատուած՝ հետևում էր երկու քաջերին։ Երկար չը տևեց պարսիկների ընդդիմադրութիւնը։ Նախարարների սրերը մեծ կոտորած արին, պարսիկները սկսեցին նահանջել։ Բայց այդ բոպէին օգնութեան հասաւ ուրացեալ Գդիհոնը. մարտը սաստկացաւ։ Սիւնեցի դաւաճանի սուրը խոր ծակեց Քաջաջի զրահը կրծքի վրայ և նա ընկաւ, իսկ Դիմաքսեանը նիզակախոց տապալուեցաւ նոյն միջոցին, երբ

նա կաթողիկոսի ձիու սանձը բռնած, առաջ էր ուղղում անցնել։ Վայրապ պարսիկներից մէկի փքինը ծակեց կաթողիկոսի թիկունքը. յորդ արիւնը ցայտեց վէրքից և որով հետև նրա ձիու կողքումն էլ մի նիզակ էր խրվել, ուստի պատկառելի ծերունին ծանր կերպով դեռին ընկաւ, ինչպէս մի մեծ կաղնեայ կոճղ։ Նրա դիակի մօտ կոտորուեցան քսանի չափ հայ զինուորներ։

Կռիւը վերջացրեց երեկոյեան մութը։ Զինուորները թողեցին դաշտը և Զարմիկը Հաղարաւուխտը խսկոյն հրաման արձակեց Վահանի եաւէից ընկնել։ Բանակը սաստիկ հապճեպով ուղի ընկաւ դէպի հիւսիս-արևմուտք, բայց երկար չը տեւեց այդ արշաւանքը։ Խաւարը սոխպեց զօրքին բանակ կազմել առաջին պատահած դիւղում։

Գիշեր է։ Մութ ու պարզ երկինքը իր

անհամար ասողերով նայում է աշխարհին։ Հանդարտ է բնութիւնը. անվրդով քաղցր է խաղաղ մսրդկանց քունը։ Ոչ ոք չը դիտէր թէ ինչ տեսարան էր ներկայացնում Դուինի Ճակատամարտի տեղը։ Հանդիստ են արիւն թափողները, քունը հանգստացրել է և նրանց, որոնց որդիները կամ հայրերը կամ սիրելի ազգականները զոհուսատրած ընկած են երկնքի տակ։ Սոսկալի էր այդ օրուայ պատերազմի հետևանքը։ Միմեանց վրայ թափուած դիակները արնաքամ էին լինում. մերթ ընդ մերթ մեր կոյտերի տակից լսվում էր թոյլ օգնական մրմունջը, որ այդ մեռելոտների վրայ թաղու

կանց այդ դիակների վրայ։

Յովհան կաթողիկոսը ընկած էր Դիմաքսեանի մօտ, մէջքի վրայ։ Նրա սպիտակ փառահեղ միրուքը արիւնալուայ էր դառել, գլուխը թեքվել էր դէպի մի կողմ և այդ դրութեան մէջ արտայայտում էր մի անսահման հեզութիւն. ջախջախուած վեղարը ընկած էր նրա թեւի տակ։ Անշարժ է հայրապետը, կեանքի նշոյլներ չեն երևում։ Նա ուրեմն վախճանու�է. Ի՞նչ կիմանաս։ Միթէ այդ է նրա վերջին հանդատեան տեղը։

—Ո՛չ, նա, մի ամբողջ ազգի մխիթարութիւնը, դթառատ հայրը բեհեղնների վրայ պիտի հոգի տայ։ Ո՞վ պիտի օգնէ նրան, ո՞վ պիտի աղատէ դայլի կերակուր դառնալուց։

Կարծես այդ ամենի մասին մտածում է թանձր խաւարի միջով նայող Մարտը։ Ահա նա իր սովորական անհանգիստ

վարքով վերկացրեց մի ցուրտ քամի։ Միևնոյն ժամանակ արևելքը սկսեց լուսաւորուել, լուսինը պատրաստվում էր իր կէսգիշերային ճանապարհորդութիւնը կատարելու։ Քամին մի քանի անգամ դաշտի մի ծայրից մինչև միւսը վազելուց և յետ դառնալուց յետոյ գիակների մէկը շարժուեց։ Հայրապետն էր դա, որին արթնացրել էր զով քամին։ Նստեր էր չարչարուեց նա ոտքի կանգնելու համար։ Քիչ ժամանակ մնաց կանգնած, կարծես կամենալով լաւ կշռել թէ կրկին ընկնե՞ն է լաւ թէ առաջ գնալը։ Բայց գնալը հեշտ բան չէր։ Մի քանի քայլ գնալուց յետոյ վերաւորը ընկաւ մի գիակոյտի վրայ, ծանր կերպով հառաչեց և կրկին կանգնեց և դողդողալով առաջ գնաց։ Զառամեալ ծերունին դողում էր ցրտից, օձեալ մազերը քամին ցրվել էր ճակատի վրայ, ծածկելով աչքերը, և նա

ոյժ չունի որ աղատէ աչքերը, որ կարող-
ղանայ պարզ տեսնել լուսնի թոյլ լուսա-
ւորուած դաշտը։ Այսպէս տատանու

Ը

ԵՐԿՈՒ ԳԵՐԻ

Զարմիհլ Հազարաւուխտ սպարապետը անխոնջ հալածեց Վահանին մինչև Տայոց աշխարհի Ոքաղէ գաւառը, բայց չը կարողացաւ և մի հատ հայ զինուոր բռնելը Այդ անյաջողութեան վրայ զայրացած պարսիկը սկսեց վրէժ հանել խաղաղ գիւղականներից. քանդեց շատ գիւղեր, կոտորեց բազմաթիւ հայեր։ Բայց շուտով նա գտաւ մի բան, որ շատ ուրախացրեց նրա սիրտը։

Լսելով թէ Վահանը թաքնուել է Շաղաղոմ գաւառի Վարայրվարոյ կոչուած

ամրութեան մէջ, որ գտնվում էր Ցունաց բաժնում*), Հայաստանը առաջ քաշեց իր զօրքերը և պաշարեց այդ ամրոցը: Բայց այդտեղ չէր Վահանը: Նրա տեղ պարսիկները կայանաւորեցին Սահականոյշ և Զարուհի տիկիններին, որոնք բերդում էին մնացել իբրև մի անվտանգ տեղ: Մեծ էր Հաղարաւուխտի ուրախութիւնը. նա գիտէր որ գտնէ այդ գերիների շնորհիւ զինաթափ կանէ Վահանի քաջ նիզակակիցներին, Ներսէհ և Հրահատ Կամսարականներին և կը հարկադրէ նրանց իր կողմն անցնել: Ուստի հրամայեց որ երկու տիկիններին պատուով պահեն: Գերի տիկինները անվախ հեռացրին պարսիկ բանակին, որ իջաւ Բասեան գաւառը. նրանք Հաստատ վրձ-

*) Հայաստանը այդ ժամանակ երկու մասերի էր բաժանուած, որոնցից մէկը պարսիկներին էր պատկանում, միւսը յոյներին:

ռել էին իրանց ամուսիններին պէս քրիստոնէական հաւատարմութեամբ մեռնել և ոչ երբէք անպղծուիլ հեթանոսների ձեռքին։

Բասենում Զարմիհր Հազարաւուխաը Պերոզից հրաման ստացաւ շուտով Հայոց աշխարհի մարզպանութիւնը յանձնել Միհրանեան Շապուհ պարսկին և փութով գնալ Վրաստան, եթէ հնար լինի սպանել Վախթանգին։ Ինքը Պերոզը պատերազմ էր սկսել հոների դէմ և զբաղում էր դէպի նրանց աշխարհը։

Շապուհ մարզպանն էլ ոչինչ չը կարողացաւ անել։ Գերի տիկիններին թողեց Բասենու Բոզբերդ ամրոցում Վշնասպ բերդակալի հսկողութեան ներքոյ. և ինքը մարդ ուղարկեց Կամսարական եղբայրների մօտ, պատուիրելով ասել, որ նրանց կանայքը բանտարկուած են, եթէ ուզում են որ նրանց արձակէ, պիտի թո-

ղեն Վահանին և Հանդիստ ապրեն իրանց ընտանիքների հետ։ Իսկ եթէ կարողանան Վահանին սպանել, մեծ պարգևներ կը ստանան Պարսից դռնից։ Նապուհ երդմամբ հաւատացնում էր որ երկու եղբայրները ազատ կը լինին մնալ միշտ քրիստոնեայ։

Կամսարականները սկզբում զանազան խոստումներով խաբեցին մարդպանին։ Բայց վերջը Նապուհի մարդիկ յայտնեցին նրան իշխանների կողմից մի այսպիսի պատասխան։

«Բոլոր խոստումներդ սուտ են, Նապուհ Միհրանեան. մենք լաւ գիտենք, դու իւ միշտ գիտես, որ սուտ ես ասում։ Մեր կնիկներով մեզ չես վախեցնիլ Մենք յարգարվում ենք մեր հաւատի համար. մեր գործն ու աշխատութիւնը աշխարհային վայելչութեան համար չէ. ոչ կնոջ և ոչ որդու համար։ Յաւիտենական երդ-

ջանկութիւնը ժառանգելու համար կանանց էլ կարող ենք դէն անել, որդիներին էլ։ Մի՛ կարծիր թէ կը խաբուենք։ Եթէ խոստմունքները մեզ համար գին ունենային, այսքան չէինք սանջուիր. այլ ուրիշ վատերի պէս առէրես մոխիր կը պաշտէինք, որ ձեր պարգևները շռայլենք։ Ատուած ողորմած է. եթէ մեր կանանց կենդանի չը տեսնենք, միւս կեանքում դու չես կարող միմեանցից բաժանել։

Այդ կարուկ պատասխանն էլ Շապուհի կարծիքը չը փոխեց։ Դրանից յետոյ էլ նա դեռ հաւատում էր թէ Կամսարականները կընկճուին, մանաւանդ որ տիկիններն էլ խաբել էին նրան, ասելով թէ իրանց ամուսիններին պիտի համոզեն կատարել մարդպանի կամքը։ Շապուհը թողեց նրանց նոյն բերդում և իր զօրքերով սկսեց անհանգիստ անել Վահանին։ Իսկ սա տեսնելով որ մի տեղից

օգնութիւն չը կայ, քաշուեց Տարօն, ուր յոյս ունէր Հաշտենից գաւառի ժողովուրդը իր կողմը դրաւել։ Շապուհը չորս հազար մարդիկներով գնաց նրա եռեւից։

—

Յուլիսի մի տօթագին օր Կարնոյ գաւառի Արծաթի անունով գիւղից քիչ հեռու մի հեղեղատի մօտ, ծառերի տակ նստած էին մի խումբ մարդիկ, թէով քսանից կամ երեսունից ոչ աւել։ Հեռու ճանապարհից վաստակած, նրանք հանել էին իրանց մախաղները և անուշ կրծում էին զինուորական ադքատիկ պարէնը, միևնոյն ժամանակ մտիկ էին տալիս հնձաւորներին, որոնք ճանապարհի միւս կողմում արտի մէջ բանում էին։ Խմբի գլխաւորն էր Ներսէհ Կամսարականը, որ հանդարտ խօսում էր իր մօտ նստած մի հաստակազմ ու թաւամազ լեռնցու հետ։ Վերջինս նոր էր միացել

այդ խմբին և կրում էր Խուրս անունը. բայց նա աւելի յայտնի էր իր գաւառի անունով. ամենքը նրան Արշամունի էին կոչում: Խօսակցութիւնը առժամանակ մոռացնել էր տուել նրանց առջևը դրած հացն ու պանիրը. երբեմն միայն նրանք ծծում էին փոքրիկ նեղաբերան կաւէ դոյլի ջուրը և զովանալով պատմում էին ախորժանօք:

Կամարականի այս խումբը մի քանի օր դրանից առաջ բաժանուել էր Վահանի խմբից և կորցրել էր ճանապարհը: Այժմ օրուայ տապից զովանալով այդ ստուերախիտ տեղում, մտադիր էր արեգակը քիչ դէպի արևմուտք թեքվելուն պէս ճանապարհ ընկնել, որոնել սպարապետին:

Ցանկարծ Արշամունին ընդհատեց իր խօսքը և ձեռքով ցոյց տուեց Կամարականին մի խումբ գինավառ մարդիկ,

որոնք բարձրից գալիս էին արտի մեծ ճանապարհով։

—Դրանք պարսիկներ են, աւելացրեց Խուրսը։

Այդ ձիաւորներից մէկը կանչեց մի հնձաւորին ճանապարհի մօտ և հարցրեց թէ արդեօք չի՞ իմանում նա Վահանի տեղը։

Գիւղացին պատասխանեց թէ չը գիտէ։

—Անպիտան անարիներ, զոչեց պարսիկը,—բաւական չէ որ մի ապստամբին թաքցնում էք ձեր տներում, դեռ չէք էլ ուզում քաջ տղաքի զօրականներին ուղիղ ճանապարհ ցոյց տալ։

—Մենք գործ չունինք պատերազմի և ապստամբութեան հետ, ինչպէս դուք գործ չունիք մեր անպիտանութեան հետ, եթէ զօրականներ էք, կարող էք գտնել թէև Վահանին ճանաչողը յիմար պիտի

լինի, որ նրա եռեւից մեռն գայ։

Պարսիկը հանեց սուրը և յարձակուեց մշակի վրայ. նա փախաւ գիւղի ճանապարհով. իսկ պարսիկը նրա եռեւից ընկաւ։

Արշամունին, որ տեղից կանգնած մրտիկ էր տալիս այդ տեսարանին, բացագանչեց.

—Եթէ պարսիկը սպանէ մշակին, Աստուած նրա արիւնը մեզանից կը պահանջէ։

Եւ նա անհետացաւ։

Ներսէհ Կամսարականը վե՛ր կացաւ և տեսաւ, թէ ինչպէս Խուրսը նիզակով շամփրեց պարսկին, որ հասուէհաս էր մշակին։ Նրա դիակը ճանապարհի փոշիների մէջ ընկաւ։

Այդ որ տեսան միւս պարսիկները, արշաւեցին Արշամունու վրայ։ Դարանամուտ հայերը մի ակնթարթում դուրս

թռան ծառերի տակից, անուշադիր թողելով իրանց ճաշը։ Մի փոքրիկ ճակատամարտ կազմուեցաւ։ Հնձաւորք մշակները էլ միացան Ներսէհի խմբի հետ իրանց ահագին մահակներով։ Մի կարճ միջոցում պարսիկները սարսափահար փախստական դարձան, թողնելով այդտեղ մօտ հօթանասուն և երկու դիակ։ Կամնարակները հրամայեց շտապով գուրս բերել ձիաները հեղեղատի ձորից։ Ձի հեծնելը, կազմուել-պատրաստուելը բոպէի գործ էր։ Նրանք թռան փախչողների հետևից։

Գիշերից բաւական անցել էր, երբ հալածողների խումբը անվտանգ յետ դարձաւ Արծաթի գիւղը, այդտեղ գիշերեց և միւս օրը ճանապարհ ընկաւ դէպի Արշամունեաց գաւառը, ուր յոյս ունէր գտնել Վահանին։ Եւ գտաւ։

Թ

ԵՐԿՈՒ ՉԱՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՀԸ

Միհրանեան Շապուհը վերջապէս իմացաւ Վահանի տեղը և դարանամուտ լինելով Արշարունեաց երկրի մի գետաձորում, սպասում էր հայոց ոպարապետին։

Վահանը իր խմբի հետ տեղափոխուեց Երիցայ գիւղի մօտերքը։ Այդտեղ մի երիտասարդ գտաւ Երանց Հրահատ Կամսարականը, որ վաղուց հեռացել էր բանակից Դուին գնալու և իր մի քանի գործերը կարգադրելու մտքով։ Ներսէհն շտապեց գրկել իր եղբօրը և հարցնել նրա առողջութիւնը։

—Զրդիտես թէ ինչ լուր եմ բերել, Ներսէհ, խօսեց Հրահատը ծիծաղելով,—մի ձեռ-

քով երկու որս եմ բռնել։

—Ի՞նչ որս, ո՞վ է, ի՞նչպէս։

—Լսիր։ Ամբողջ ժամանակ ես գտնվում էի Բասենում, Բոզբերդի մօտ. երկար աշխատում էի այդ բերդը մտնել, բայց չը կարողացայ։ Ատոմի օգնութեամբ կարողացայ շինականներից մի փոքրիկ խումբ կազմել, այլ և կաշառել բերդի պահապաններից չորսին։ Մինչդեռ պատրաստվում էի գիշերով գրաւել բերդը, յանկարծ յիսունապատի ձիաւորներ թափուեցան մեզ վրայ։ Նրանք գալիս էին սրարշաւ և, ինչպէս առաջին նուագ կարծեցինք, օգնութեան էին հասնում մեզ վանելու համար։ Իմ հետևակները լաւ չարդ տուին այդ ձիաւորներին և այնքան կարճ միջոցում, որ ես մնացի զարմացած։ Ցարձակուող խումբը զարհուրած դէս ու դէն ցրուեցաւ, մի քանիսներն էլ բերդը մտան։ Շուտով ամեն ինչ

պարզուեց։ Բերդապահ Վշնասպը փախաւ, և մենք ներս մտնելով՝ իմացանք, որ քաղաք մտած ձիաւորները պատմել էին, թէ այդ օրը Կարնոյ սահմաններում Վահանի զօրքը հալածել է իրանց. իսկ մեր խումբը ընդունել էին մեր բանակի մի մասի տեղ, որ գալիս էր բերդը պաշարելու։ Վշնասպն իսկոյն փախել էր՝ Շապուհից օգնութիւն խնդրելու։ Բերդին տիրացայ ես և իշխարկէ իսկոյն աղատեցի Սահականուշին և Զարուհուն։ Միւս օրը հեռացայ Բասենից և լսեցի որ ձիաւորներին ջարդողը դու ես եղել։

Ուրախութեան աղաղակ բարձրացաւ լսողների մէջ. Ներսէհն արտասուելով համբուրեց եղբօրը և ամենքի մօտ ուխտեց մի քանի ոչխար զոհել։

—Դու ո՞ւրտեղ թողեցիր նրանց, հարցրեց նա Հրահատից։

—Ատոմի հետ նրանց տարայ Սղիո-

վիտ, Զարիշատի տէր Ցաճատ իշխանի մօտ Թողեցի. իշխանի կինը, Զարուհու մօրաքոյրը, անչափ ուրախացաւ և ասաց որ նրանց երկար ժամանակ հիւր պիտի պահէ։

—Զարիշա՜ս... ոլքա՞ն հեռու ես գնացել, սիրելիս։

—Այո՛, ես գիշեր ցերեկ ճանապարհ էի կտրում, հարցնում էի ամեն տեղ, մինչև որ գտայ սպարապետի բանակատեղը։

Ներսէհը վազեց սպարապետի մօտ, որ մենակ նստած խօսում էր մի գիւղացու հետ։ Նա էլ չափազանց ուրախացաւ Հրահատի քաջութեան վրայ և միևնոյն ժամանակ պատմեց նրան իր ծրագիրը, որ կազմել էր գիւղացու հետ։ Ներսէհը շատ հաւանեց այդ ծրագիրը և շատ ուշ թողեց Վահանին մենակ։ Սպարապետը դեռ երկար չէր քնեց և անդադար միտք

էր անում։

Առաւօտեան երիզացիք զինուորուած վահաններով և նիզակներով շար ընկան պարսից բանակի առաջ պատերազմական կարգով։ Սպարապետն էր այդպէս կարգադրել ինքն էլ իր մարդկանց հետ անցաւ պարսից բանակի քամակը և յանկարծահաս կայծակի պէս նետուելով թշնամիների վրայ, սաստիկ ջարդ տուեց և փախցրեց բանակի մի մասը։ Մի անգամ էլ յաղթուեցան պարսիկները։

Շապուհը մռնչում էր վայրենի գազանի պէս, նա կրկին կուտեց իր բանակը և գնաց Վահանի եռևից դէպի Շուեայ գիւղը, մաքուսը դրած՝ կամ չարաչար մահով մեռնել, կամ ոչնչացնել այդ փոքրաթիւ բանակը։

Հայոց սպարապետը նեղ տեղն էր ընկել, անհնարին էր առաջ գնալ, իսկ եռևից պարսիկներն էին գալիս։ Դրի

տղամարդը իր շուրջը հաւաքեց քաջ նիզակակիցներին, բոլորի հետ եղբայրաբար զրկախառնուեց, յորդորեց չը վախենալ թշնամու բազմութիւնից։

—Իմ սիրտն զգում է, որ սա վերջին պատերազմը պիտի լինի. կամ մահով կը վերջացնենք, կամ կենդանի կը մնանք և կը ծաղրենք մեր թշնամիների կողմանը։

Առաց սպարապետը և դասաւորեց իր հարիւրապետի մարդկանցը, ինքը կանգնեց առջևում։ Պարսիկների խիտ ու բազմաւոր խմբերը այնպիսի սասակութեամբ յարձակուեցան, որ հայ բանակի մեծ մասը սարսափած փախաւ։ Մնաց Վասակը երեսուն մարդկանցով այն ահագին բազմութեան առաջ. բայց չը վախեց, հաստատ ոտով կանգնեց ճակատ առ ճակատ։ Այդպէս հաստատակամութիւն ունի միայն այն մարդը, որ մեռնելու և ապրելու մէջ ոչինչ առաւելու-

թիւն, նոյն իսկ զանազանութիւն չի տեսնուած։ Թշնամի բանակին դէմ առ դէմ Վահանին սիրտ ու քաջութիւն էր տալիս մեռնելու միտքը։ Զարդել ու ցրուել այդ բանակը անհնարին էր։

Շապուհը տեսնելով Վահանին, կանգ առաւ և կանչելով ուրացող Դղիհոն Սիւնեցուն, ասաց մի դառն ժպիտով. „Այդ մարդը կամ խենթ է և այսքան բազմութիւնը ճանճերի տեղ է ընդունում, կամ մի աստուածային էակ է, որ պիտի կոտրէ մեզ“։

—Ոչ այդ, ոչ այն, տէր, պատասխանեց Դղիհոնը, թոյլ տուէք ինձ վերջացնել նրա հետ գործը։

Սիւնեաց զունդը առաջ եկաւ։ Հսկայատիպ Դղիհոնը ուրախութեամբ որորում էր հաստ ընչացքը։ Բայց մինչև պատրաստուելու հրաման տալը, Վահան սպարապետը երեք անգամ երեսին խաչ

հանելով, վագեց Թշնամու վրայ. նրան հետևեցին մնացած երեսուն մարդիկը...

Աջ թևում ունենալով հուժկու Ներսէհին, իսկ ձախում առիւծասիրտ Հրահատին, Վահանը կոտորելով ճեղքեց Թշնամու շարքերը, անցաւ. նրա հետևից հասան Քոնթ Առաւենեան, Ներս Ցովսէփեան, Ատդէն Վանանդացին և Ղեւոնդարդոս յոյները, որոնք նոյնպէս սկսեցին կոտորել Այդ հրաշալի քաջագործութիւնը դիւթեց պարսիկներին. զինուորները ափ ի բերան մնացել էին շուարած, շատերը փախչելու ճանապարհ էին որոնում։

Գրիգոն Սիւնին կատաղած առիւծի պէս գոչելով ընկաւ այդ չորս մարդկանց հետևից։ Նրա ահագին սուրը սաստիկ թափով իջաւ Ներսի գլխին, սաղաւարտը ճեղքուեց և նա երկու դառած գլխով գետին փռուեց։ Հենց այն միջոցին, երբ Գրիգորը կրկին բարձրացրել էր սուրը,

Քոնթ Առաւենեանը մսեց նիզակը նրա կոնատակը. միւս ընկերները ծակեցին գրահը և յանկարծ երեք նիզակ ցցուած էին ուրացեալի մարմնի մէջ. նա ճեաց ցցուած, մինչդեռ նիզակները խառնում էին թոքերը: Վերջապէս Գդիհոնը փայր ընկաւ, իսկ այդ քաջութիւն գործողները հասան Վահանի մօտ:

Պատերազմը վերջացաւ: Տրտում ու յուսահատ նստած էր Շապուհը Գդիհոնի դիակի մօտ, նա բռնուել էր մի սեստակ գերբնական երկիւղով: Տեսնելով այդ հսկայի մահը, այդ կոտորածը և Վահանի աղատութիւնը, նա քիչ էր մնում լաց լինի, բայց ամաչում էր Գդիհոնի ծառաներից, որոնք հանում էին իշխանի փորոտիքը, սիրան ու թոքերը, որ դիակը չը հոտի: Վերջացնելով, մարմինը պատեցին եղեգնով, Սիւնեաց աշխարհը տանելու համար:

Օրը մթնեց։ Դառն, անմխիթար օր պարսիկների համար։ Շապուհը իր վրանում յուսահատ նստած է. հազարաւոր մարդիկ տանջում են նրան։ „Ի՞նչ կը լինի եթէ այդ մարդը այդպիսի յաղթութիւնից յետոյ մտնէ Անձտայ, Ծոփաց և Հաշտենից գաւառները և այնտեղի Հայերին մեզ դէմ գինէ։ Մի բուռն մարդիկ այսպիսի քաջութիւն արին. հապա ի՞նչ կը լինի հաղարաւորներինը“։

Ամբողջ գիշերը այս մտքերը տանջում էին պարսից մարդպետին։ Լուսաբացին արեւոց գունդերը հրաման տուին հոդ-ճնդով Բասեան գաւառը չուել։

Գնաց և Վահանը։ Թողնելով Կամսարական եղբայրներին Զարիշատում, նա Արտաշատի երկիրը հասաւ և իսկոյն ընդոց ս. Էջմիածին. այնտեղ ուխտ արաւ և որով հետև Իջման տաճարը արատ-քուտ քայքայուել էր, պատուէր արաւ

կարկատելու և ապա գնաց Դուբին, ուր նրան սպասում էին կաթողիկոսը և ժողովուրդը։

Մի շաբթից յետոյ լուր հասաւ Դուբին, թէ Պերսը չարաչար յաղթուել է Հոնե-րից և ստիպուել պատերազմում։ Ով լսում էր, ասում էր. „չարը պատժուեց“։

Շուտով պատմեցին և այն, որ Շապուհը ձեռնունայն Ատրպատական է անցել և այնտեղ թողնելով իր զօրքը, գնացել է մոռնակցել ու այն ժողովին, որ թագաւոր պիտի ընտրէր։

Ժ

ԵՐԵՔ ՊԱՀԱՆՋ

Պարսկաստանը Պերոզից յետոյ թագաւոր ճանաչեց Վաղարշին, որ մի բարեհոգի և խաղաղասէր մարդ էր։ Պարսից լայնածաւալ տէրութեան ամէն ծայրերում մարդիկ ազատ շունչ քաշեցին։

Հանդստացաւ և Հայաստանը։ Հայոց սպարապետը սուրը դրեց պատեանում, նա և նրա հաւատարիմ զինակիցները քաշուեցան իրանց տները, մտան ընտանիքի ծոցը։

Բայց Վահանը չէր վարձատրուած։ Նա սպասում էր, որ վերջապէս իր արդար դատը լսեն։ Եւ իսկ որ լսեցին։ Նրա անհաշտ թշնամիները, Զարմիհը Հազարա-

ւուխտ և Շապուհ Միհրանեան սպարապետները բարեկամ դարձան և պարսից դիւանի մէջ յանդիման լինելով արեաց արքային, պատմեցին մեծ Վարդանի արժանի ժառանգի առաքինութիւնները, անպարտելի քաջութիւնը։ Խորագէտ Վարդարը հասկացաւ իսկոյն, որ այդ առիւծի հետ բարեկամութեամբ միայն կարելի է բան տեսնել։

Գարնանամուտ էր. մի այնպիսի ժամանակ, երբ բնութեան փոփոխութեան հետ հայերը սպասում էին Պարսկաստանից մի որ և է նորութիւն։

Հէր դաւառի Նուարսակ գիւղը մի հետաքրքիր տեսարան էր ներկայացնում։ Այնտեղ հաւաքուել էր պարսկական մեծագումար զօրքը, որի առաջնորդ Նիխոր մարզպանը իր բնակարանում գրագուած էր մի քանի հիւրեր պատուելով։ Պարսից զօրքը պատերազմի չէր եկել, Նիխոր-

ը քաղաքներ և բերդեր առնելու մասին չէր մտածում։ Նրա միտ գտնվում էր Վաղարշի խոզաղությեան հրովարտակը, որով հրաւիրում էր Վահանին հնազանդուիլ իրան։ „Էլ ի՞նչ ուներս ասելու, գրուած էր այդ հրովարտակի մէջ։ — դու առում էիր Պերոզին, որով հետև նա չար էր և անբարիշտ։ Այժմ նա չը կայ։ Այլ ևս ի՞նչ միտք ունիս։“

Այդ հարցի պատասխանին էր սպասում Նիխորը երբ հիւրերից, որ հայոց ազատագիտի կողմից էին եկել և հայ ազնուատոհմիկ հարազատներից էին։ Օրը մթնելու վրայ էր, երբ նրանք հասան բանակը։ ուստի և Նիխորը ցանկացել էր նախ լաւ հիւրասիրել և ապա լսել նրանց խօսքը։ Վիշերն անցաւ ուրախութիւնների մէջ։ Իսկ երբ լուսացաւ, Նիխորը ատեան կազմեց և հայ պատուիրակներին հարց ու փորձ արաւ։ Խօսքը

Սահակ Կամսարականը, Ներսէհի և Հրահատի եղբայրը։ Նա ասաց.

—Արեաց արքային հաւատարմութեամբ ծառայել պարտք են համարել մեր նախնիքները շատ հնուց։ Ձեզ էլ յայտնի են, ով քաջ մարդպան, մեր երեխի մարդկանց անուններըը, որոնք պարսից թշնամիների առաջ արիւն են թափել. իմ միտքը այդ քաջերին գովելը չէ և ես այդ տեսակ յանձնարարութիւն չունիմ մեր սպարապետից։ Վահան Մամիկոնեանը, ուզարկելով ինձ ձեզ մօտ, պատուիրել է հասկացնել որ հայոց ազգը երբէք միտք չունի ապստամբել տիրող տէրութեան դէմ. այլ ցանկանում է ծառայել, և հաւատարմութեամբ ծառայել այն դահին, որ Աստուծու տնօրինութեամբ մեզ վրայ հրամայող է կարգուած։ Մեր քաջ սպարապետը մինչև այժմ պատերազմներ է մղել ձեր զօրքերի դէմ

ոչ թէ յաղթողի սին փառքը վայելելու համար, կամ ոչ թէ հարստութեան և աշխարհակալութեան անարդ ծարաւով, ոչ այդ չէ եղել հայոց երևելի մարդկանց միտքը։ Դուք լաւ գիտէք Պերոզի արարքները. ահա դրանք էին հարկադրում սպարապետին մաքառել։ Նրա նպատակն էր, եթէ ապրել, լաւ ապրել, իսկ եթէ մեռնել, մեռնել՝ ազատաց կեանքում գեղեցիկ ապրելու յուսով։ Նա պատրաստ էր մինչև վերջին շունչը սուր ի ձեռին ունենալ. և այդ վճիռը չի թողելու, եթէ պարսից արքունիքը շարունակէ այնպէս լինել, ինչպէս էր մինչև այժմ։ Հաւատացէք իմ անկեղծութեանը, հզօր մարզպան, ես ոչ վախկոտ մէկն եմ, ոչ էլ շողոքորթ. ինձանից մեծի ասածներն եմ ձեզ յայտնում։

—Եւ այժմ ի՞նչ է Վահանի միտքը, հարցրեց Նիկորը։

—Այդ դուք կը տեսնէք այն երեք խնդիրքներից, որ սպարապետը առաջարկել է ձեր պատուիրակներին և ինձ էլ հրամայել է ձեզ յայտնել։—Ահա այդ պայմանները։

Կամսարականը հանեց մի մագաղաթի կտոր և սկսեց կարդալ։ Նրան ականջ էին դնում ուշադրութեամբ։

—Առաջին խնդիրքն այս է, որ թողէք մեզ և մեր քահանաներին քրիստոնէական օրէնքը ազատ, անեղկիւղ և համարձակ պաշտել, ուր որ կամենանք։ Հայից մոդ չը շինեն. հայի ուրացութիւնը չը վարձատրէք պատուով և գահով։ Հայոց աշխարհի բոլոր կրակատուները քանդէք, վերցնէք։ Երկրորդ խնդիրք. իմանաք յաւն ու վատը որոշել։ Լաւ համարէք քաջ, բարեսոհմիկ, օգտակար մարդկանց, և ոչ թէ վատ, անարդ և անպիտան մարդկանց, որոնց

մինչև այժմ պարսից ազգությունքը պաշտել փառաւորել է այն պատճառով, որ մեխրատպաշտ են դառել։ Իսկ երրորդ խընդիրքն այն է, որ արեւոց թագաւորը անարդար դատաստան չանել. ամեն բան աչքով տեսնել, կշռել, ականջով լսել և իմանալ մի մարդու լաւութիւնը կամ վատութիւնը։ Դատաստան չանել միայն մի կողմի ասածները լսելով, այլ երկու կողմն էլ քննել, և ապա միայն լաւն ու վատը որոշել և ըստ այնմ վարձատրել կամ պատժել։

Տիրեց կարգ լռութիւն։ Սահակ Կամսարականը յետ դառաւ նստեց իր տեղը. նա այլևս ասելիք չունէր։ Նիխորը լռեց ու մունջ մնացում էր այդ պահանջների մասին։ Վահանի համարձակ առաջարկութիւնները, ինչպէս պարզ տեսնվում էր, խոր ազաւորութիւն էին զարծել նրա վրայ։ Վերջապէս նա խօսեց։

—Ճիշտ է, միանգամայն ճիշտ։ Վահանը ոչքան լաւ պատերազմող է, այնքան էլ գեղեցիկ մտածող է։ Իրաւունք ունի պահանջելու, և մեր ոչքան, ես վստահ եմ, պիտի յարգէ քաջ տղամարդի առաջարկութիւնը։

Խոսխոտունեաց ազգից մի նախարար, որ պարսից բանակումն էր լինում և այդ խօսակցութեան ժամանակ ներսը էր ինչպէս մի խաւարամած դիշեր, կանգնեց և առաջ գնալով, սկսեց խօսել։

—Տէր, արեաց ոչքայի հաւատարիմ երկիւղած ծառաներս վրդովուած ենք, լսելով Մամիկոնեան Վահանի խօսքերը։ Այդ բոլոր առաջարկութիւնները մեզ անպատուելու համար են միայն։ Սակայն ո՞վ է այդ Վահանը։ Մի ըմբոստ դաւաճան, որ բիւրաւոր վշաերը է պատճառել արքայական կառավարութեանը և մեր գնդերից շատ քաջազունները է տապալել։

Այդպիսի մարդուն շուտ են անում դահ-
ճի ձեռքը մատնել, ոչ թէ հանդարտ
լսում են թէ ինչ է ասում։ Անմահ ա-
ստեղակի երկրպագուներս բողոք ենք
բարձրացնում այս անլուր յանդգնու-
թեան դէմ, տէր. մենք պատրաստ ենք
միշտ ծառայել մեր թագաւորին, արիւն
թափել նրա համար, ինչպէս մինչև այ-
ժմի էլ արել ենք։ Եւ սակայն այսօր ին-
չո՞ւ ենք լսում մի ապստամբից, որ հա-
մարձակվում է առաջարկութիւններ ա-
նել իր խաւարային մոլար կրօնի մասին։

Ուրացող Խոռխոռունուն հեռաւեցին
և միւսները, որ այնտեղ նստած էին և
խնդրեցին պատժել Վահանին։ Բայց Նի-
խորը իր սովորական հանդարտ ձայնով
վրայ բերաւ.

—Իզուր էք վրդովվում, Շապուհ իշ-
խան, ձեր մասին ոչինչ չունի Հայոց
սպարապետը։ Դուք ճանաչում էք միայն

մեր մեծազօր արքային։ Մազդեզական պաշտօնեան ինչու պիտի վիրաւորուի մի հայի խօսքերով։ Դուք նրանցը չէք (Նիխորը ձեռքով ցոյց տուաց Սահակին), դուք մերն էք. և արեաց աղգը դեռ այն աստիճանին չի հասել, որ չը կարողանայ փարձատրել իր սրտացաւ զաւակներին։

Առեանը զրանով վերջացաւ։ Նիխորը դուրս գնաց, յայտնելով Կամսարականին իր զոհունակութիւնը և մեծ յանկութիւնը տեսնել Վահանին։ Կամսարականը ուրախ էր և երբ պատահեցաւ Խորխոռունուն, ասաց հայերէն.

—Դեռ ոչինչ չը կայ և դուք ճաքվում էք, ինչ կը լինի ձեր օրը, եթէ Վահանը աւելի ևս փառաւորուի։

Ոչինչ չը պատասխանեց ուրացեալը, կարծես չը հասկացաւ. զլխակոր գնաց Նիխորի հետևից։

Անցան ամիսները։ Հայաստանի բարեկամները ուրախութեամբ լսեցան, որ Վաղարշը ընդունել է սպարապետի խնդիրքները և իր կողմից էլ հաստատել է նրա սպարապետութիւնը։ Ամեն տեղ պատմում էին, թէ ինչպէս լաւ խօսել էր Վահանը Վաղարշի դիւանում, երբ նրա հրաւիրանօք Պարսկաստան էր գնացել։ Պատմում էին նոյնպէս, որ Վահանը օգնական զօրք է տուել պարսիկներին՝ Զարեհի դէմ կռուելու համար, որ կամենում էր գահը խլել Վաղարշից։ Իսկ հայոց երիտասարդները որպիսի զմայլմամբ պատմում էին Վրէն Վանանդեցու քաջագործութիւնները, որոնց ականատես էր եղել Զարեհին հալածող պարսկական ամբողջ բանակը։

Ամեն տեղ տիրեց խաղաղութիւնը։

ԺԱ.

ՀԱՅՈՑ ԳԱՐՈՒՆ

Չորս տարի էր անցել այն ժամանակից, երբ Վահանը նախարարների խընդրիքով Հայոց միաբանութեան գլուխն էր կանգնել։ Այդ չորս տարիների ընթացքում նրա անընկճելի ուժեղ կամքը կարողացել էր շատերի դեղեցիկ նպատակը իրագործել։

Մայիսուայ մի գեղաժպիտ օր էր։ Գուլենի ժողովուրդը խումբ-խումբ գիմում էր գեպի քաղաքի հարաւային դռները, ուր արդէն դումարուել էր եկեղեցական դասը։ Մարդիկ ծիծաղելով

խօսում էին, ուրախ էին ինչպէս Քրիստոսի յարութեան օրը և միմեանց պատահելիս ողջոյնի փոխարէն ասում էին. «Ժամանակն է, գալիս է, գալիս է»։ Այդ խօսքերը վառում էին լսողներին. ամէնքը շտապում էին շուտ գնալ տեսնել այդ եկողին։ Մի ժամի ընթացքում քաղաքաղռների մօտ կուտուեցաւ մի ահագին բազմութիւն, որ ծփում էր ծովի պէս։

Ամբոխի աղաղակները յանկարծ դադարեցան և խիտ առ խիտ սեղմուած խմբերը յետ քաշուելով մի նեղ ճանապարհ բաց արին։ Դռների ետևից դուրս եկաւ ձի հեծած ալեզարդ հոգևորականը, որին շրջապատել էին շատ ձիաւորներ և եպիսկոպոսներ։ Մարդիկ յարգանքով բաց արին դլուխները, հոգևորականը օրհնեց աջ ու ձախ։ Դա Յովհան կաթողիկոսն էր, որ հասնելով եկեղեցա-

կան դասին, իջաւ ձիուց, սկսեց զգեստաւորուիլ։

Ամբոխի համբերութիւնը հետզհետէ հատնում էր, իսկ սպասած մարդը չէր երևում։ Առաջ գնացած ձիաւորները յետ էին դառնում միմեանց ետևից և զանազան լուրեր էին հաղորդում հետաքրքիր ամբոխին։ Մէկն ասում էր, թէ ինքս տեսայ, միւսը հաւատացնում էր թէ դեռ հեռու են, բայց շուտով կը գան, որով հետև շատ են շտապում։

Վերջապէս հեռուից Սրտաշատի Ճանապարհի վրայ երևաց ձիաւորների մի խումբ, որ սաստիկ արագութեամբ էր գալիս։ Մի սարսափելի խառնակութիւն ընկաւ բազմութեան մէջ. իւրաքանչիւրը ուզում էր մի լաւ տեղ գտնել, ամենքից բարձր լինել։ Եկեղեցական դասը սկսեց հանդիսաւոր երգեցողութիւնը. խաչվառները բարձրացան օդի մէջ։

Ամենից առաջ կանգնած էր Հայրապետը և ոսկեկուռ խաչը ձեռին մի երջանիկ դէմքով նայում էր դէպի ձիաւորների խումբը։ Մօտենալով քաղաքին, առջևից եկող մի գեղեցիկ ադամարդ քշից իր ձին և մի ակնթարթում հասաւ Հայրապետի մօտ։ Ժողովուրդը, մոռանալով տեղ գտնելու և բարձր լինելու ցանկութիւնը, սկսեց գոռալ «կեցցէ՛ մարդպետը, կեցցէ՛...»։ Իսկ կաթողիկոսը ոչինչ հուժկու գինուորին և երեխայի պէս սկսեց լաց լինել։ Զրահաւոր գինուորը, արտասուելին նայեց նրա հետ եկողները։ Բազմութիւնը մնաւ քաղաք, սկսեց յառաջ ընթանալ աւելի և աւելի սեղմուելով նեղ փողոցում։ Գլուխների այդ մեծ բազմութեան մէջ ձիու վրայ երևում էր օրուայ հերոսը, որի շքեղ զարդարուն զրահը փայլում էր արեգակի տակ։

Վահանն էր դա, որին նոր էր Վաղարշը Հայաստանի մարզպան կարգել։ Նրա հետ եկողներն էին նրա դառնութեան օրերի անբաժան ընկերները, Կամսարական եղբայրները և ուրիշ հարազատները։

Ժողովուրդը շատ դժգոհ էր շարժվում. ամեն մեկի ցանկութիւնն էր երկար, շատ երկար նայել քաջին, տեսնել, ուրախանալ։ Ազատակները, որոնք ժողովրդի զոհունակութիւնն էին փկայում, զզրդացնում էին քաղաքը։

Այդպիսի յուսահատ դանդաղկոտութեամբ թափօրը հասաւ Դուինի մայր եկեղեցուն։ Ով ճարպիկ էր, կարող եղաւ ներս մտնել, իսկ մի ահագին բազմութիւն մնաց դրսում։

Ամենայն Հայոց պեղասրդ Հայրապետը բեմ եկաւ։ Տիրեց մի խորին լռութիւն։ Նա սկսեց խօսել։ Ինչքան բաւ էր

խօսում, ինչքան զմայլեցուցիչ էր Ծերունին իր ուրախութիւնից փայլող վեհ դէմքով, իր պարթև հասակով։ Նա օրհնեց Վահանին, որ կանգնած էր նրա մօտ, հայցելով Աստուծուն տալ նրա սրին յաղթութիւն եկեղեցու և ազգի թշնամիներին վրայ։

Ապա դառնալով դէպի ժողովուրդը, սկսեց մի հիանալի ազգու քարոզ։ Իւրաքանչիւր խօսքը Ծերունու սրտից էր դուրս գալիս և թափանցում էր լսողի սիրտը, որ դողում էր, յափշտակվում։ Երբ հայրապետը հասաւ ոգևորութեան ծայրին, քարացած ամբոխը սկսեց հեկեկալը լաց լինել։ Իսկ այդ ամենի պատճառը, հայ մարդպանը, կանգնած էր քարոզչի մօտ, գլուխը կորացրած, գեղեցիկ երբև մի Նորապսակ փեսայ։

Քարոզը վերջացաւ։ Ամբոխը գլոհ տուաւ դէպի դուրս։

—Այսօր Աստուածային հրաշք է Երևում, ասում էին բիւրաւոր բերաններ ..

Օրը կիրակի էր. ժողովուրդը խումբ-խումբ ցրուեց զբօսնելու. շատերը հեռացան քաղաքից անտառների զեղեցկութիւնը վայելելու համար:

Հայոց համեստ գարունը զարդարել էր Հայոց դաշտերը բիւրաւոր ծաղկունքներով: Առատաշնորհ էր նա, անուշաբոյր:

Բայց Հայոց սրտերի համար կար մի աւելի զեղեցիկ ծաղկափթիթ գարուն: Նա երբեք ամռուայ կեանք չունեցաւ. նա կենդանարար, շքեղ էր և ձմեռնային բուքերի ժամանակ...

Դա Վահանն էր:

Հայոց գարունը Վահան

Գրեց Ա. Մարգարեան, Փաստ. ուսումնարանի աշակերտ
Գրվեցավ 19 26 թվականին Մարգարեան

10387

2013